

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Բանակցութիւններու Դադրեցումը Ներկայիս Ո՛չ Նպատակայարմար

Ատրպէյճանի հերթական սադրանքին հետեւանքով Արցախի Պաշտպանութեան Բանակի չորս զինուորներ կորսնցուցին իրենց կեանքը՝ յուզմունք եւ ցասում յառաջացնելով Հայութեան մօտ: Այս դէպքի ազդեցութեան տակ Արցախի խորհրդարանը Հայաստանի պատուիրակութենէն պահանջեց դադրեցնել բանակցութիւնները, որոնք Միացեալ Նահանգներու հովանաւորութեամբ կ'ընթանային Ուաշինկթընի Մէջ:

«Հակառակ պարագայում բանակցութիւնները շարունակուելու կը նշանակի ատրպէյճանական կողմի յարձակողական պահուածքի խրախուսում եւ միջազգային մակարդակով արտօնութիւն», ըսուած է խորհրդարանի յայտարարութեան մէջ:

Հասկնալի է պատգամաւորներու հոգեկան վիճակը, որուն ազդեցութեան տակ գրուած է սոյն յայտարարութիւնը: Եօթը ամիսէ շրջափակման մէջ, մարդասիրական առաւել խորացող տագնապ, միջազգային անտարբերութիւն. այս բոլորը բնականաբար կ'ազդեն իւրաքանչիւր Հայու եւ յատկապէս Արցախցու սառն մտածելու կարողութեան վրայ: Սակայն, ինչ որ ալ ըլլան պարագաները պէտք չէ շարժիլ ու գործել յուզումնային պահերու ազդեցութեան տակ՝ առիթ չտալով, որպէսզի Ատրպէյճան գործադրութեան դնէ իր ոչ թաքուն նպատակները:

Բոլորիս համար պարզ է որ, Պաքուի իշխանութիւնները իրենց ամենօրեայ սպառնալիքներով ու սադրանքներով կը փորձեն հող պատրաստել՝ Արցախի ու Հայաստանի դէմ ռազմական գործողութիւններու դիմելու համար: Տակաւին վերջերս թշնամի երկրի պաշտպանութեան նախարարը կը յայտարարէր՝ «մեծ ջանքեր չեն պահանջուիր զինաթափելու Ղարաբաղի մէջ մնացած ապօրինի ռազմական խմբաւորումները»: Արցախ-Ատրպէյճան սահմանին վրայ տեղի ունեցող ռազմական գործողութիւնները հող կը պատրաստեն լայնածաւալ յարձակման համար: Ներկայիս Ատրպէյճանը զսպող միակ ազդակը շարունակուող բանակցութիւններն են, ըլլան անոնք ուաշինկթընեան, պրիւքէլեան եւ կամ մոսկովեան:

Յատկապէս Ուաշինկթըն եւ Պրիւքէլեան բացայայտ կը խօսին Արցախի իրաւունքներու եւ անվտանգութեան մասին: Նոյնպէս Մոսկուան կը պահանջէ Լաչի-

«Խաղաղութեան Հանձնայնագրին Շուրջ Յառաջընթաց Արձանագրուած է», Ըսաւ Էնթընի Պլինքըն

Յունիս 27-29-ին Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը եւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարար Ճէյհուն Պալազմովը Վիրճինիա նահանգի Արլինկթըն քաղաքի Ճորճ Շուլցի արտաքին գործերու ազգային ուսումնական կեդրոնին մէջ ունեցան երկկողմ բանակցութիւններ:

Ուաշինկթընի մէջ արտաքին գործերու նախարարները հանդիպեցան ԱՄՆ պետական քարտուղար Էնթընի Պլինքընի եւ ԱՄՆ նախագահի՝ ազգային անվտանգութեան հարցերով խորհրդական Ճէյք Սալիվանի հետ:

Նախարարներն ու անոնց խումբերը շարունակած են յառաջընթացը «Խաղաղութեան եւ միջպետական յարաբերութիւններու հաստատման մասին» երկկողմ համաձայնագրի նախագիծին շուրջ: Անոնք համաձայնութեան հասած են համաձայնագրի նախագիծի եւս քանի մը յօդուածներու շուրջ եւ արձանագրած են փոխըմբռնման յառաջընթաց՝ միեւնոյն ժամանակ արձանագրելով, որ քանի մը առանց-



Ուաշինկթընի մէջ կայացան արտաքին գործերու նախարարներու միջեւ հերթական բանակցութիւնները

քայլին հարցերու շուրջ դիրքորոշումները կը պահանջեն հետագայ աշխատանք:

Երկու նախարարները իրենց գնահատանքը յայտնած են ամերիկեան կողմին Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ բանակցութիւնները հիւրընկալելու համար եւ յայտնած են բանակցութիւնները

ընդ շարունակելու իրենց յանձնառութիւնը:

ԱՄՆ պետական քարտուղար Էնթընի Պլինքըն յայտնած է, որ Հայաստանն ու Ատրպէյճանը ձեռք բերած են խաղաղութեան համաձայնագրի «հետագայ յառաջընթաց»՝

Ամերիկայի Անկախութեան Տօնին Առթիւ Փաշինեան Ընդհանուրա՛ծ Է Ծօ Պայտընին



Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան շնորհաւորական ուղերձ յղած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Ճօ Պայտընին՝ Անկախութեան օրուան առթիւ:

Շնորհաւորական ուղերձին մէջ ըսուած է.

«Մեծարգո՛յ պարոն նախագահ,

Հայաստանի Հանրապետութեան եւ իմ անունից ջերմօրէն շնորհաւորում եմ Ձեզ եւ Միացեալ Նահանգների բարեկամ ժողովրդին Անկախութեան օրուայ կապակցութեամբ:

Միացեալ Նահանգները եւ իր ժողովուրդը պետութեան կերտման բարդ գործընթացն անցել են անկախութեան գաղափարի շուրջ համախմբման, ժողովրդավարական



ապագայի տեսլականի ձեւաւորման եւ դժուարութիւնները միասնաբար յաղթահարելու ճանապարհով: ԱՄՆ-ի շարունակական առաջնորդութիւնը ժողովրդավարութեան հարցում իր նպաստն է բերում ազատութեան, հաւասարութեան եւ մարդու անօտարելի իրաւունքների հիմնարար արժէքների առաջնորդմանը բազմաթիւ երկրներում:

Վերջին տարիների հայ-ամերիկեան աշխույժ երկկողմ յարաբերութիւնները խոստովանելի են՝ յատկապէս ժողովրդավարական բարեփոխումների, օրէնքի գերակայութեան ամրապնդման եւ փտածութեան դէմ պայքարի ոլորտներում: Ուրախ եմ արձանագրել, որ

Ատրպէյճան Պետք Է Վերջ Դնէ ԼՂ Մարդասիրական Ծգնաժամին. Amnesty International

Միջազգային իրաւապաշտպան Amnesty International կազմակերպութիւնը Թուրքիոյ գրաւում կատարած է Լաչինի միջանցքի արգելափակման մասին:

Գրաւման մէջ կ'ըսուի, որ Յունիս 15-ին Ատրպէյճանը դադրեցուցած է բոլոր տեսակի փոխադրումները Լաչինի միջանցքով՝ Լեւոնային Ղարաբաղը Հայաստանին կապող միակ ճանապարհով:

Amnesty International-ը նշած է, որ տարածաշրջանը շրջափակման մէջ է 2022 թուականի Դեկտեմբերէն: Այդ ժամանակէն ի վեր Լեւոնային Ղարաբաղի ժողովուրդը յոյսը կը դնէ ուսական խաղաղապահ ուժերուն եւ Կարմիր խաչի մարդասիրական օգնութեան վրայ:

«Այժմ ատրպէյճանցի զինուորները արգելափակած են մուտքը, մարդասիրական ճգնաժամը աւելի կը խորանայ: Յունիս 26-ին Կարմիր խաչը թոյլ տուաւ վերսկսիլ ծանր հիւանդներու տարահանումը: Այնուամենայնիւ, հիւանդանոցներու մէջ դեղորայքի եւ բժշկական պարագաներու խիստ պակաս կայ: Ատրպէյճանի իշխանութիւնները պէտք է վերացնեն Լեւոնային Ղարաբաղի շրջափակումը եւ վերջ դնեն թափ առնող մարդասիրական ճգնաժամին», յայտարարած է կազմակերպութիւնը:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Երեւանի Կեդրոնում Արցախ «Փրկողներն» Օգնում են Պաքուին Ֆրանսային Բանակցային Սեղանից Դուրս Թողնելուն

ՎՈՎԱ ՅԱՎՈՐԵԱՆ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պաշտօնական կայքը տեղեկութիւն տարածեց, թէ իբր Ֆրանսայի նախագահ էմանուէլ Մակրոնը Մարսել կատարած եւօրեայ այցի ժամանակ, որի ընթացքում հանդիպել է Մարսելի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, յայտարարել է, թէ նա Ալիեւի վրայ աւելի շատ ճնշում է բանեցրել եւ կը բանեցնի, քան Փաշինեանը: «Հարցը Փաշինեանն է: Ես Արցախի հարցով միակն եմ, որ յստակ կեցուածք եւ պատգամ ունեմ: Չկասկածէք Արցախի եւ ընդհանրապէս Հայաստանի հարցերով վճռակաշունքեան մէջ: Պիտի շարունակեմ ջանքերս, նոյնիսկ եթէ մինչ օրս այս օրակարգով գրեթէ միակն եմ միջազգային ընտանիքի մէջ:

«Գիտէք նաեւ, որ առաջին անգամ Ֆրանսան Հայաստանում իր դեսպանութիւն է ուղարկել գինուորական կցորդ, իսկ դա ինչ-որ բան նշանակում է, չէ՞: Մենք պիտի անենք մեր կարելին, առաւելագոյնը», - ըստ դաշնակցականի յայտարարութեան՝ ասել է էմանուէլ Մաքրոնը:

Այս լուրը պաշտօնապէս դեռեւս ո՛չ հերքուել է, ո՛չ հաստատուել: Միայն Մարսելի հայ համայնքի

քի հետ կազմակերպուած Ֆրանսայի նախագահի հանդիպմանը մասնակցած երիտասարդներից մէկն է հերքել ՀՅԴ կողմից մամուլում տարածուած լուրը:

Երիտասարդը յայտնել է, որ հանդիպման ամբողջ ընթացքում համանման որեւէ յայտարարութիւն Ֆրանսայի նախագահը չի արտաբերել, այլ ընդհակառակը՝ շեշտել է հայ-ֆրանսական բարեկամական յարաբերութիւնների եւ մշակութային կապի կարեւորութիւնը:

Ինչ-որ դաշնակցականի՝ մերկայարանոց յայտարարութիւն չի շեցնող այս լուրին անմիջապէս արձագանքեց Պաքուն՝ նշելով. «Նախկինում Մաքրոնը բազմիցս հանդէս է եկել հակաստորայէջմանական յայտարարութիւններով թէ՛ պատերազմի ժամանակ, թէ՛ դրանից չետոյ, ինչը ակնյայտ խօսում է այն մասին, որ Ֆրանսայի նախագահը հայկական լուպլիի հերթական գործիքն է»:

Աւելին՝ ատրպէյճանական Trend գործակալութիւնը, վկայակոչելով դիւանագիտական իր աղբիւրները, գրում է, որ Պաքուն Ֆրանսայի դեսպան Անն Բուալոնը կանչուել է Ատրպէյճանի ԱԳՆ:

«Բուալոնը կանչուել է պարզաբանումներ տալու Ֆրանսայի

նախագահ էմանուէլ Մաքրոնի՝ Պաքուի եւ Երեւանի միջեւ բանակցութիւնների հետ կապուած «Ատրպէյճանի վրայ ճնշում գործադրելու» մասին յայտարարութիւնների վերաբերելով: Դեսպանին ներկայացուել է Պաքուի դիրքորոշումը, որ Մաքրոնի՝ հայկական լրատուամիջոցներում հրապարակուած խօսքերը պէտք է պաշտօնապէս հաստատուեն կամ հերքուեն», - ասում է ատրպէյճանական լրատուականի հրապարակման մէջ:

Ֆրանսայի դեսպանը, ըստ գործակալութեան, պատասխանել է, որ Մաքրոնի կողմից արուած ենթադրեալ յայտարարութիւնների մասին տեղեկութիւններ չունի:

Ինչո՞ւ Ատրպէյճանը հայճեպօրէն արձագանքեց որեւէ կերպ պաշտօնապէս չհաստատուած եւ ոչ պաշտօնական խողովակներով տարածուած այս տեղեկութեանը, որն արուել է ոմն դաշնակցականի կողմից: Պատասխանն ակնյայտ է. Ատրպէյճանը շահագրգռուած է Ֆրանսային դուրս թողնել բանակցային սեղանից, արժեզրկել նրա միջնորդի կարգավիճակը եւ Ֆրանսային ներկայացնել որպէս կանխակալ հայամէտ կողմ, որն ունակ չէ կատարել անկողմնակալ միջնորդի դեր:

Այս մասին, վստահաբար, դաշնակցականները շատ լաւ գիտեն:

Որովհետեւ Պաքուն մէկ անգամ արդէն հրաժարուել է մասնակցել քառակողմ բանակցութիւններին՝ պատճառաբանելով, թէ չեն ուզում, որ ֆրանսական կողմը ներկայացուած լինի որպէս միջնորդ, քանի որ բացայայտ պրոհայկական դիրքաւորում ունի: Իսկ հայկական կողմը ամէն ինչ անում է, որ Ֆրանսան մնայ բանակցային սեղանին որպէս միջնորդ: Եւ ուրեմն, եթէ անգամ էմանուէլ Մաքրոնը իրօք այդպիսի յայտարարութիւն է արել ֆրանսահայերի հետ հանդիպման ժամանակ, ապա ինչո՞ւ է փակ հանդիման ժամանակ արուած այս արտայայտութիւնը Դաշնակցութիւնը տարածում՝ լաւ իմանալով, որ այն կարող է Պաքուն օգտագործել Հայաստանի եւ Արցախի դէմ:

Երեւանի, Պէյրութի, Հալէպի, Լոսի փողոցներում Արցախ «փրկող» կազմակերպուած խմբաւորումը Հայաստանի գործող իշխանութիւններին վարկանիշային վնաս հասցնելու մոլուցքից կուրացած անում է քայլեր, որոնք ոչ թէ չեն փրկում Արցախը, այլ հապէս վնասում են Արցախի եւ Հայաստանի շահերին:

Ակնյայտ է, որ այս ուեւանշիտ խմբաւորման համար Արցախն ընդամէնը պատրուակ է կամ, եթէ կ'ուզէք, գործիք՝ իշխանութեան գալու եւ այն պահելու համար:

«CIVIC.AM»

Դա Պէտք է Հայաստանին Ու Արցախին, Ուրիշ Ոչ Մէկի

ՅԱՎՈՐ ԲԱՂԱԵԱՆ

Ինչպէս պարբերաբար, այդպէս էլ Արցախի ու Ատրպէյճանի շփման գծում վերջին սրացումից յետոյ վերստին թեժացան խօսակցութիւններն այն մասին, որ Արցախում պէտք են միջազգային խաղաղապահներ: Եթէ իհարկէ խնդիրները դիտարկենք «պէտք է»-ի համատեքստում, ապա ոչ մի խաղաղապահ էլ պէտք չէ, այլ պէտք է իրավիճակը վերադառնայ կամ վերադարձնել մինչեւ 2020 թուականի Սեպտեմբերի 27, Արցախը պէտք է լիարժէք կապուած լինի Հայաստանին, հայկական ուժերը պէտք է կանգնած լինեն Քարվաճառում, Զրականում եւ այլն:

Բայց դա անիրատեսական է, երազ, ցնորք, պատրանք, կ'ասեն շատերը: Եւ կը լինեն միանգամայն իրաւացի: Բայց, եթէ օրինակ միջազգային խաղաղապահների մասին խօսակցութիւնը նոյնքան պերճախօս չէ, որքան կորսուած տարածքների վերադարձը, դա դեռ չի նշանակում, որ աւելի իրատեսական ու ռացիոնալ է եւ հապէս տարբերում է այդ պատրանքից կամ ցնորքից: Իհարկէ, միջազգային խաղաղապահ ուժերի թեման պատրանք, ու ցնորք չէ, հաստատապէս, բայց անիրատեսական է, մի շարք պատճառների ու հանգամանքների բերումով: Անիրատեսական է առնուազն այն առումով, ինչով կախուած կարող է լինել Հայաստանից ու Արցախից: Միջազգային խաղաղապահ ուժեր Հայաստանին ու Արցախին պէտք են, բայց ուրիշ ոչ մէկին դա պէտք չէ: Դրա վկայութիւնն է այն, որ անգամ Լաչինի միջանցք միջազ-

գային փաստահաւաք առաքելութիւն գործողները վերաբերեալ Երեւանի առաջարկը չի արժանանում միջազգային շատ, թէ քիչ հաստատուն ուղղորութեան եւ հաւանութեան: Սրա պատճառն էլ բաւականին պարզ է:

Որեւէ մէկը, առաւել եւ համաշխարհային պատերազմի ներկայիս պայմաններում, չուրի բարդ եւ կոնֆլիկտային իրավիճակում կայունութեան համար պատասխանատուութիւն ստանձնելու շահ: Առաւել եւս, որ դա կը նշանակի թեթեւացնել Ռուսաստանի՝ այսպէս ասած միջազգային հանրութեան ներկայիս գլխաւոր հակառակորդի պատասխանատուութեան բեռը: Ինչո՞ւ անել դա, եթէ խնդիրը հակառակն՝ Ռուսաստանին ծանրաբեռնել յաւելեալ բեռով:

Միջազգային խաղաղապահ ուժերը նշանակելու են նաեւ կոշտ խօսակցութիւն Ատրպէյճանի հետ, ստիպելով չարել իրավիճակը: Դա կը նշանակի հակադրութիւն Ատրպէյճանի հետ, ինչը բոլորովին չի տեղաւորում միջազգային խոշոր դերակատարների ծրագրերի մէջ: Այդ

ամէնը համառօտ, որովհետեւ կայ իրանի հարց, կայ ռուս-իրանական դաշինքի հակադրման հարց, կայ Չինաստանի հակադրման հարց, որտեղ Ատրպէյճանն ու Թուրքիան արեւմտեան բեւեռի համար ունեն առանձնաշատուկ նշանակութիւն: Այլ կերպ ասած, այսօր եւ տեսանելի ապագայում՝ քանի դեռ համաշխարհային պատերազմ է, ոչ մէկին Արցախում միջազգային խաղաղապահ պէտք չէ՝ Հայաստանից ու Արցախից բացի: Դա չի նշանակում անշուշտ, որ պէտք չէ բարձրաձայնել այդ մասին պարբերաբար: Դա պէտք է անել, առնուազն միջազգային հանրութեանը իր պատասխանատուութեան մասին յիշեցնելու համար, բայց պէտք չէ այդ առնչութեամբ ունենալ պատրանք, թէ բաւական է Հայաստանն ու Արցախը ասեն այդ մասին, ու ամէն ինչ կը լինի: Չի լինելու, եւ Հայաստանն ու Արցախը խօսելով այդ մասին, այդուհանդերձ պէտք է մտածեն, որ խնդիրների լուծումը պէտք է փնտուեն այլ ուղղութեամբ եւ մեթոդաբանութեամբ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Նախագահ Խաչատուրեան Սերժած է Ներում Շնորհել Նաիրի Յունացեանին Եղբորը

Նախագահ Վահագն Խաչատուրեան մերժած է ներում շնորհել Նաիրի Յունացեանին եղբորը՝ ցմահ բանտարկուած կարէն Յունացեանին: Նախագահ Խաչատուրեանի հրամանագիրը հրատարակուած է Արդարադատութեան Նախարարութեան պաշտօնական կայքէջին մէջ: Մերժման պատճառներուն մասին չի հաղորդուել:

Հրամանագիրը ստորագրուած է Յունիս 26-ին: Հոկտեմբեր 27-ի ոճրագործութեան պարագլուխին եղբայրը աւելի վաղ դիմած էր կառավարութիւն՝ խնդրելով իրեն ներում շնորհել եւ ազատ արձակել: Ահաբեկչութեան գործով ցմահ բանտարկուած են նաեւ յանցախումբի պարագլուխ Նաիրի Յունացեանը եւ եւս երեք հոգի:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏԱԹԵՐԹ
ՄՈՅԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ


Վարչապետը Ամենօրեայ Շփումներու Մէջ Է Արցախի Նախագահին Դետ. Մամուլի Խօսնակ

Հայաստանի վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Պաղտասարեանը կը հերքէ վերջին օրերուն տարբեր լրատուականներու կողմէ շրջանառուող լուրերը, թէ Հայաստանեան իշխանութիւնները բոլոր մակարդակներով դադրեցուցած են իրենց շփումները Լեռնային Ղարաբաղի գործընկերներուն հետ:

«Աւելին, նշուած է, որ Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով ստեղծուած մարդասիրական ճգնաժամը ՀՀ կառավարութեան օրակարգից դուրս է», Ֆէյսպուքով գրած է Պաղտասարեանը՝ շարունակելով:

«Իրականութեան հետ աղերս չունեցող այս պնդման առումով կարեւոր ենք համարում ընդգծել, որ վարչապետ Նիկոլ Փաշինեանը բազմիցս է նշել Արալիկ Յարութիւնեանի հետ ամէնօրեայ շփումների մասին: Այս հանգամանքը հրապարակային ելոյթներում եւ տարբեր ձեւաչափերում վերահաստատել է նաեւ ԼՂ նախագահը:

Յանկանում ենք եւս մէկ անգամ յիշեցնել, որ դեռ 2022 թուականի տարեկան լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով մարդասիրական ճգնաժամի կառավարման եւ Լեռնային Ղարաբաղի ժողովրդին աջակցելու նպատակով փոխվարչապետ Տիգրան Խաչատրեանի գլխավորութեամբ ձեւաւորուել է աշխատանքային



Վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Պաղտասարեան

խումբ, որի խնդիրը Լեռնային Ղարաբաղի իշխանութիւնների հետ մարդասիրական հարցերի մշտադիտարկում իրականացնելն ու անհրաժեշտ հրատապ աջակցութիւն ցուցաբերելն է, այդ թւում՝ միջազգային կազմակերպութիւնների օգնութեամբ: Աշխատանքային խմբում ընդգրկուած են առողջապահութեան, աշխատանքի եւ ընկերային հարցերու, տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքների, ելեմուտքի նախարարները, ինչպէս նաեւ պետական այլ գերատեսչութիւնների ներկայացուցիչներ»:

Յովիկ Աբրահամեանի Ընտանիքին Պատկանող Դոզին Օրինականութիւնը Կը Վիճարկուի

Հայաստանի Գլխավոր Դատախազութիւնը Արտաշատի համայնքապետին դէմ շարք մը հայցադիմումներ ներկայացուցած է վարչական դատարան՝ պահանջելով անվաւեր ճանչնալ Նարեկ Միսիսեանի գիւղերու ղեկավարներուն կողմէ Աբրահամեաններուն օտարած մօտ 161 հա հողի օրինականութիւնը, ինչպէս նաեւ վերացնել հետեւանքները: :

Արարատի մարզի Միսիսեան համայնքին ղեկավարը 2004-ի Սեպտեմբեր 24-ին 5 տարբեր որոշումներով ընդհանուրը 40,6 հա հողատարածք օտարած է նախկին վարչապետ Յովիկ Աբրահամեանի որդե-

ւոյն՝ Արգամ Աբրահամեանին: 2003-ի Փետրուար 7-ի որոշմամբ 4092 քմ, հողամաս ալ օտարած է Յովիկ Աբրահամեանին կնոջ՝ ձուլիեթ Աբրահամեանին:

Ինչպէս «Հետք»-ին փոխանցած են Գլխավոր Դատախազութեանն է՝ համայնքի ղեկավարին որոշումները կայացուած են օրէնքի խախտմամբ, քանի որ օտարուած են պահեստային ֆոնտի հողերուն վրայ ընդգրկուած հողամասեր՝ առանց անոնց նպատակային նշանակութեան փոփոխութեան, մինչդեռ անոնց օտարումը կը թոյլատրուի միայն նպատակային նշանակութիւնը փոխելէ յետոյ:

Ստորագրահաւք՝ Արցախը Ատրպէյճանի Մաս Ծանչնալը Քրեականացնելու Նպատակով

Արցախը Ատրպէյճանի մաս ճանչնալը քրեականացնելու նպատակով խումբ մը քաղաքացիներ՝ հանրային, մշակութի գործիչներ, նախկին պաշտօնեաներ ու պատգամաւորներ ստորագրահաւք նախաձեռնած են՝ «Հայաքուէ» խորագրով:

Նախաձեռնութեան հեղինակները կ'առաջարկեն Քրեական օրէնագիրքին մէջ լրացում կատարել եւ Հայաստանի անունով Արցախը Ատրպէյճանի մաս ճանչցող պաշտօնատար անձերու համար պատիժ սահմանել՝ 10-15 տարուան բանտարկութիւն:

«Առաջին կէտը նախատեսում է քրեականացնել Հայաստանի Հանրապետութեան անունից Արցախի ճանաչումը այլ պետութեան կազմում, երկրորդ կէտը նախատեսում է քրեականացնել Հայաստանի Հանրապետութեան անունից Հայոց Յե-

ղասպանութեան միջազգային ճանաչումից հրաժարումը: Ինչո՞ւ հէնց այդ երկու կէտերը, որովհետեւ այդ երկու կէտերն ուղիղ կերպով նշուած են որպէս համազգային նպատակներ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակագրում, որն ընդունուել է 1990 թուականի Օգոստոսի 23-ին եւ որպէս այդպիսին հանդիսանում են Հայաստանի սահմանադրական կարգի հիմք», ըսաւ «Հայաքուէ»-ի համակարգող Աւետիք Չալապեանը:

Եթէ Հայաստանի 50 հազար քաղաքացիներու ստորագրութիւն հաւաքուի, ապա, ըստ Սահմանադրութեան, հարցը պէտք է մտնէ Ազգային ժողովի օրակարգ: Իսկ եթէ խորհրդարանը դաջն չհաստատէ՝ անհրաժեշտ պիտի ըլլայ 300 հազար ստորագրութիւն՝ նախագիծը հանրաքուէի դնելու համար:

Նուազագոյն Կենսաթոշակի Չափը Հաւասարած Է Պարէնային Չամբիւղի Արժեքին

Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան՝ Յունիս 29-ի նիստին որոշում կայացուած է բարձրացնել նուազագոյն կենսաթոշակներու եւ նպաստներու չափերը, ինչպէս նաեւ հաստատուած է Պարէնային անվտանգութեան համակարգի զարգացման ռազմավարութիւնը եւ 2023-2026 թուականներու գործողութիւններու ծրագիրը:

Իրականացուող փոփոխութիւններով՝ կառավարութիւնը քայլեր պիտի ձեռնարկէ մինչեւ 2026 թուականը նուազագոյն կենսաթոշակի եւ կենսաթոշակի միջին չափերը հաւասարեցնել, համապատասխանաբար՝ պարէնային եւ սպառողական զամբիւղներու արժեքներուն:

Ըստ նախատեսուող փոփոխութիւններուն՝ 2023-ի Յունիս 1-էն նուազագոյն կենսաթոշակի չափը պիտի կազմէ 36 հազար դրամ՝ ներկայիս 31 հազար 600 դրամի փոխարէն: Ըստ էութեան, 2018 թուականին համեմատ, սոյն փոփոխութեամբ նուազագոյն կենսաթոշակի չափը աճած է 20 հազար ՀՀ դրամով կամ 225 տոկոսով:

Այս տարուան առաջին եռամսեակին պարէնային զամբիւղի ամսական արժեքը 1 շունչի հաշուով կազմած է 36 հազար 188 դրամ, իսկ նուազագոյն սպառողական զամբիւղին արժեքը՝ 66



Հազար 943 դրամ:

Ըստ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի՝ կենսաթոշակներու բարձրացմամբ յետվճարը հաշուի առնելով՝ պարէնային զամբիւղը կ'ապահովուի 99 տոկոսով, իսկ սպառողական զամբիւղը՝ 73,7 տոկոսով միջին կենսաթոշակի եւ սպառողական զամբիւղի յարաբերակցութիւն: Այսպիսով, նուազագոյն կենսաթոշակի չափը արդէն իսկ հաւասարած է պարէնային զամբիւղի արժեքին, որ մարդու օրկանիզմին անհրաժեշտ անունը ի նուազագոյն քանակը կ'ապահովէ՝ օրական 2412,1 ջերմութ:

Պարէնային անվտանգութեան համակարգի զարգացման ռազմավարութեան իրականացման շնորհիւ եւս կ'ակնկալուի ապահովել բնակչութեան բոլոր խումբերուն համար նուազագոյն պարէնային զամբիւղի հասանելիութիւն:

Ութը Կալուած Նուէր Ստացած Դատաւորի Լիազօրութիւնները Դադրեցուեցան

Բարձրագոյն Դատական Խորհուրդը հրապարակեց Երեւան քաղաքի Առաջին ատեանի Ընդհանուր իրաւասութեան քրեական դատարանի դատաւոր Դաւիթ Յարութիւնեանին կարգապահական պատասխանատուութեան ենթարկելու վերաբերեալ որոշումը:

«Բարձրագոյն Դատական Խորհուրդը քննելով արդարադատութեան նախարարի պարտականութիւնները կատարող Լեւոն Բալեանի միջնորդութիւնը՝ Երեւան քաղաքի Առաջին ատեանի Ընդհանուր իրաւասութեան քրեական դատարանի դատաւոր Դաւիթ Յարութիւնեանին կարգապահական պատասխանատուութեան ենթարկելու վերաբերեալ, որոշեց այն բաւարարել: Երեւան քաղաքի Առաջին ատեանի Ընդհանուր իրաւասութեան քրեական դատարանի դատաւոր Դաւիթ Յարութիւնեանի լիազօրութիւնները հական կարգապահական խախտման հիմքով դադարեցնել: Որոշումն ուժի մէջ է մտնում հրապարակման պահից եւ վերջնական է», ներկայացուցած է ԲԴԽ նախագահ Կարէն Անդրէասեանը:

Դատաւոր Դաւիթ Յարութիւնեանը լրագրողներու հետ զրոյցին յայտնած է, թէ առաջին իսկ օրէն իրեն համար անսպասելի ոչինչ եղած է:



Դատաւոր Դաւիթ Յարութիւնեան

Դատաւոր Յարութիւնեանը իր երիտասարդ տարիքին ահռելի հարստութեան տէր է: Ընդ որում, ան ամբողջ աշխատանքային ասպարէզի ընթացքին եղած է բացառապէս պետական ծառայող: Այս դատաւորը մինչ չեղափոխութիւնը հիմնականին մէջ բաւարարած է կալանք տալու դատախազութեան միջնորդութիւնները եւ միայն չեղափոխութեանէն յետոյ «բարիացած» եւ մերժած է նման միջնորդութիւնները:

42-ամեայ Յարութիւնեանը Փտածութեան Կանխարգիւման Յանձնաժողով ներկայացուցած իր՝ 2022 թուականի գոյքի, եկամուտներու, ծախսերու, շահերու յայտարարագրին մէջ յայտարարագրած է ընդհանուր 10 անշարժ գոյք, որոնցմէ 9-ը իրեն կը պատկանին միանձնեայ սեփականութեամբ, մէկը՝ համայնքի սեփականութեամբ: Ուշագրաւ է, որ գոյքերէն 8-ը Յարութիւնեանը նուիրատուութիւն ստացած է:

ԼՈՒՐԵՐ

Փաշինեան Յեռախօսագրոյց Ունեցած Է Թուրքիոյ Նախագահ Էրտողանի Յետ



Վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռախօսագրոյց ունեցած է Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայյիպ Էրտողանի հետ:

Վարչապետը շնորհակտութեամբ է նախագահը Քուրպան Պայրամի առթիւ, իսկ նախագահը շնորհակտութեամբ է վարչապետը գալիք Վարդավառի՝ Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան տօնի առթիւ:

Ղեկավարները քննարկած են իրենց երկիրներուն միջեւ երկկողմ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացը: Այս ծիրին մէջ, քննարկուած է դիւանագիտական անձնագրեր ունեցողներու եւ երրորդ երկիրներու քաղաքացիներու համար ցամաքային սահմանի բացման մասին պայմանաւորուածութեան կատարման ընթացքը:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ հեռախօսագրոյցին ընթացքին նախագահ Ռեճեպ Էրտողանը յայտնած է, որ Թուրքիան պիտի շարունակէ Հայաստանի հետ յարաբերութիւններու լիարժէք կարգաւորման գործընթացը, նշուած է թրքական կողմին տարածած հաղորդագրութեան մէջ:

«Բանակցութիւններու ընթացքին քննարկուած են նաեւ երկկողմ յարաբերութիւնները: Նախագահ Էրտողան ըսած է, որ Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւններու լիարժէք կարգաւորման համար մեկնարկած գործընթացին մինչ այժմ վստահութեան ամրապնդման միջոցներ ձեռնարկուած են, եւ այդ գործընթացը պէտք է շարունակուի», կը փոխանցէ «Անատոլու» պետական գործակալութիւնը՝ վկայակոչելով Թուրքիոյ նախագահականին հաղորդագրութիւնը:

«Զրկանք Կրելով Պէտք Է Հասնինք Ինքնորոշման»: Արայիկ Յարութիւնեան

Արցախի Ազգային Ժողովին մէջ, Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանը պատասխանելով պատգամաւորներու հարցումներուն անդրադարձաւ Պաքու-Ստեփանակերտ երկխօսութեան՝ նշելով, որ ինք կրնայ ենթարկուիլ միայն ժողովուրդի ճնշման: Արայիկ Յարութիւնեան ըսաւ, որ կը յարգէ բոլոր կարծիքները, որոնք տարբեր են՝ երթալ Պաքուի մէջ երկխօսիլ, երկխօսիլ, սակայն երրորդ երկրի մէջ կամ առհասարակ չհամաձայնիլ երկխօսութեան երթալ Պաքուի հետ:

Յարութիւնեան, միեւնոյն ժամանակ նշեց, որ պէտք է ընդհանուր նպատակ ունենալ՝ թէկուզ այդ նպատակին հասնելու համար կրնայ մարդիկ տարբեր քայլեր պատկերացնեն, բայց այդ նպատակին հասնելու համար, ըստ Յարութիւնեանի, միանշանակ է, որ պէտք է զրկանքներ կրէ արցախցին: «88 թուականին շարժումը սկսել ենք, գլխներս տուել են՝ Սովետական միութիւնը: Նրանից յետոյ մենք դիմադրել ենք, կրել ենք զրկանքներ՝ շաքարաւազ չենք ունեցել, ուտելիք չենք ունեցել, ձէթ չենք ունեցել: Իրավիճակը նպաստաւոր է եղել, պատերազմական գործողութիւնների ընթացքում կարողացել ենք յաջողութիւններ գրանցել, եւ եկել է մի փուլ, որ Ղարաբաղի հետ ոչ միայն հաշուի էին նստում, այլ քննարկում էին՝ 5 շրջանը տուէք, 2-ը մնայ ձեզ... արդէն ինքնորոշութեան ամենաբարձր աստիճանն ունէինք, հաշուի էին նստում մեզ հետ: Այսօր հաշուի չեն նստում, քանի որ մենք



Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան

պատրաստ չենք, մենք զրկանքներ կրելը համարում ենք մեզ համար կործանարար, ոչ, դա կործանարար է: Ընկերներ, շաքարաւազ չունենալը դեռ չի նշանակում զրկանք կրել: Այո՛, մենք մեր զրկանք կրելով պէտք է հասնենք ինքնորոշման իրաւունքի: Բայց եթէ ընտրեցինք հանգստութիւնը, մի տարի յետոյ հանգստութիւն չենք ունենալու», ըսաւ Արայիկ Յարութիւնեան:

Նախագահ Յարութիւնեան նշեց նաեւ, որ հնարաւորութիւն կը տեսնէ ինքնորոշման իրաւունքը իրացնելու. «Եթէ հնարաւոր չլինէր, ես մի օր չէի մնայ իմ պաշտօնին: Հրաժարական կը տայի, կ'ասէի՝ ժողովուրդ ձեւ չկայ... ինքնորոշման իրաւունքի միջազգային կանոնից ոչ մէկը մեզ չի կարող զրկել»:

Ատրպէյճանի Սադրանքը Նպատակ Ունի Զեզոքացնել Խաղաղութիւնը Հաստատելու Զանքերը. ՀՀ Վարչապետ

Յունիս 28-ին, Ատրպէյճանի գինուած ուժերու ստորաբաժանումները հրետանային միջոցներէ կրակ բացած են Մարտունիի եւ Մարտակերտի հայկական դիրքերու ուղղութեամբ՝ կիրառելով նաեւ անօդաչու թռչող սարքեր, որուն պատճառաւ հայկական կողմը ունեցած է 4 զոհ:

Ատրպէյճանի կողմէ Լեռնային Ղարաբաղի մէջ Յունիս 28-ին իրականացուած սադրանքը նպատակ ունի չէզոքացնել Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութիւնը հաստատելու, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին իրաւունքները եւ անվտանգութեան հարցերը հասցէագրելու ջանքերը: Կառավարութեան նիստին ժամանակ այս մասին յայտնեց վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Ցաւակցութիւն յայտնելով զոհուածների հարազատներին եւ ընկերներին՝ պէտք է ընդգծեմ, որ այս ռազմական սադրանքը երկար ժամանակ նախապատրաստուած էր տեղեկատուական գրոհներով: Ատրպէյճանը պարբերաբար յայտնում էր, թէ իբր Լեռնային Ղարաբաղի Պաշտպանութեան բանակը շփման գծի տարբեր հատուածներում խախտում է հրադադարի ռեժիմը: Ատրպէյճանական լրատուութեան հրապարակումների մտացածին լինելը

Լեռնային Ղարաբաղի իշխանութիւնների կողմից հետեւողականօրէն իցոյց է դրուել, ինչի պայմաններում ակնյայտ է դառնում, որ Ատրպէյճանն իրադրութիւնը սրելու եւ Լեռնային Ղարաբաղը հայաթափելու հետեւողական քաղաքականութիւն է վարում: Այսինքն՝ այն քաղաքականութիւնը, որի վերաբերեալ մենք երկար ժամանակ ահազանգում ենք», ընդգծեց Փաշինեան:

Վարչապետը ընդգծեց, որ վերջին սադրանքը նպատակ ունի չէզոքացնել Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութիւնը հաստատելու, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի իրաւունքներուն եւ անվտանգութեան հարցերը հասցէագրելու ջանքերը:

«Այս օրերին Հայաստանի պատուիրակութիւնն արտաքին գործերի նախարարի գլխաւորութեամբ Ուլաչինկթընում շարունակում է բանակցութիւնները՝ Ատրպէյճանի պատուիրակութեան հետ խաղաղութեան պայմանագրի բնագիրը համաձայնեցնելու ուղղութեամբ: Մեր տարածաշրջանում խաղաղութիւնն այլընտրանք չունի եւ մեր կառավարութիւնը, առերեսուելով բոլոր դժուարութիւնների ու բարդութիւնների հետ, շարունակելու է խաղաղութեան քաղաքական ուղեգիծը», եզրափակեց Փաշինեան:

Պաշտպանութեան Նախարարութեան Ռազմական Համալսարանը Կը Վերածուի Ռազմական Ակադեմիայի



Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութեան Վազգէն Սարգսեանի անուան ռազմական համալսարանը նոր փուլի յառաջ կանգնած է. այն կը վերածուի ռազմական ակադեմիայի՝ իր կազմին մէջ ներառելով նաեւ ռազմաօդաւորացիութեան համալսարանը: Այս մասին յայտնած է պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանը համալսարանի կազմաւորման 29-րդ տարեդարձին նուիրուած հանդիսաւոր արարողութեան ժամանակ: «Մենք արդէն ունենք կառավարութեան համապատասխան որոշումը: Ցաւաջիկայում այլ իրաւական որոշումների միջոցով եւս ռազմական համալսարանի նոր կառուցուածքն աւարտուն տեսք կ'ունենայ: Մենք խնդիր ենք դրել մեր

առաջ, ըստ որի ռազմական համալսարանը պէտք է լինի ոչ միայն մեր Զինուած ուժերի դարբնոցը՝ կրթական կարեւորագոյն կեդրոնը, այլ դառնայ այնպիսի ռազմատեսչական հաստատութիւն, որտեղ ուսանելու ցանկութիւնն եւ երազանք կ'ունենան նաեւ այլ երկրների երիտասարդներ, եւ սա հնարաւոր նշաձող է», ընդգծած է նախարարը:

Պաշտպանութեան Նախարարութեան լրատուական վարչութեան փոխանցմամբ՝ Պապիկեանը վստահութիւն յայտնած է, որ կրթօճախին մէջ դեռ պիտի ուսանին հայրենիքի հազարաւոր նուիրելի երիտասարդներ՝ հայրենիքին սահմանները անառիկ ու պատիւը բարձր պահելու համար:

Արցախի Խորհրդարանը Հայաստանի Պատուիրակութենէն Կը Պահանջէ Դադրեցնել Բանակցութիւնները Ուաշինգթոնի Մէջ

Արցախի Խորհրդարանը միաձայն ընդունած յայտարարութեամբ դիմած է Ուաշինգթոնի մէջ գտնուող Հայաստանի պատուիրակութեան՝ պահանջելով «անյապաղ դադրեցնել մեկնարկած բանակցութիւնները մինչեւ Արցախի հետ շփման գիծին վրայ եւ ՀՀ սահմաններուն լիակատար գինադադարի հաստատումը եւ զայն պահպանելու փաստաթղթային երաշխիքներու տրամադրումը»:

«Հակառակ պարագայում՝ բանակցութիւնները շարունակուող կը նշանակի ատրպէյճանական կողմի յարձակողական պահուածքի խրախուսում եւ միջազգային մակարդակով արտօնութիւն», ըսուած է յայտարարութեան մէջ, որ Արցախի Խորհրդարանի նիստին հրապարակեց Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասեանը:

«Ատրպէյճանը ոչ միայն կանխամտածուած սովամահ է անում Արցախի բնակչութեանը, այլեւ նրան հասցրել է բնաջնջման եզրին: Արցախը երբեք չի եղել եւ չի լինելու անկախ Ատրպէյճանի կազմում, եւ դրա շուրջ ցանկացած քննարկում մեզ համար անընդունելի է: Դա մեր կարմիր գիծն է, որը ոչ ոք իրաւունք չունի խախտելու», ըսաւ Թովմասեան:

ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդին, ԵԱՀԿ Մինսքի Խումբի համանախագահ երկիրներու ղեկավարներուն Արցախի Խորհրդարանը կոչ կ'ընէ «կարեկցանքի յայտարարութիւններէն, յորդոր-

ներէն եւ Խորհուրդներէն զատ ձեռնարկել յստակ գործնական քայլեր, մասնաւորապէս, պատժամիջոցներ կիրառել Ատրպէյճանի նկատմամբ՝ զսպելով անոր յարձակողական նկրտումները»:

Արցախի Խորհրդարանականները Ռուսիոյ կը յորդորեն «խաղաղապահ առաքելութեան շրջանակին մէջ աւելի կոշտ միջոցներով կասեցնել Ատրպէյճանի հակամարդկային, ցեղասպան գործողութիւնները»:

«Ուշագրաւ եւ յատկանշական է, որ Ատրպէյճանի կողմից հրադարձի պարբերաբար իրականացուող խախտումների այս նոր միջադէպը, նախորդ դէպքերին համանման, նոյնպէս արձանագրուել է այն ժամանակ. երբ ներկայումս ԱՄՆ պետական քարտուղարի միջնորդութեամբ Ուաշինգթոնում տեղի են ունենում Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերի նախարարների հերթական բանակցութիւնները՝ հայ-ատրպէյճանական հակամարտութեան խաղաղ կարգաւորման հարցերի շուրջ: Դա, անշուշտ, եւս մէկ անգամ վկայում ու հաստատում է, որ «խաղաղութեան պայմանագրի» շուրջ տեղի ունեցող այս բանակցութիւնները նոյնպէս իրականում ոչ այլ ինչ են, քան տարածաշրջանում տեւական խաղաղութեան ու կայունութեան հաստատման միջնորդի ձեւաւորման նմանակում՝ իբր թէ միջազգային ջանքերի լոյսին տակ», ըսուած է Արցախի Խորհրդարանի յայտարարութեան մէջ:

Խաղաղութեան Համաձայնագրին Շուրջ

Շարունակուած էջ 1-էն

Հնայած ծանր աշխատանքին:

«Որքան կը մօտենայ համաձայնագրի ձեռք բերման, այնքան աւելի դժուար կը դառնայ որոշ պարագաներու մէջ, քանի որ ամենադժուար հարցերը կը ձգուին յետոյ», ըսած է Պլինքըն Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարներ Արարատ Միրզոյեանի եւ ձէջնու Պայրամովի միջեւ ԱՄՆ-ի մէջ տեղի ունեցած եռօրեայ բանակցութիւններու աւարտին:

Պլինքընի խօսքով՝ բանակցութիւնները տեղի ունեցած են «անկեղծութեան, բացութեան եւ շիտակութեան» միջոցով: Միջոցով մէջ, քանի որ երկու կողմերն ալ ցուցաբերած են բանակցութիւնները լրջօրէն վարելու պատրաստակամութիւն՝ համաձայնագրի ձեռք բերման նպատակով: Ան հետագայ յառաջընթացի յոյս յայտնած է երկու երկիրներու առաջնորդներու հանդիպման, որ տեղի պիտի ունենայ ԵՄ միջնորդութեամբ, եւ, ինչպէս կը սպասուի, պիտի կայանայ յառաջիկայ շաբաթներուն:

«Ես բարձր կը գնահատեմ

հետագայ յառաջընթացը այս ընդհանուր նպատակի ճանապարհին, որ պիտի եզրափակէ (խաղաղութեան) համաձայնագրի մշակումը, այդ շարքին՝ պայմանաւորուածութիւնները որոշ լրացուցիչ յօդուածներու վերաբերեալ, ինչպէս նաեւ մնացեալ հարցերու մէջ (կողմերու) դիրքորոշումներու աւելի խոր ըմբռնումը: Եւ գիտակցումը այն բանին, որ դեռ պէտք է յաղթահարուի ծանր աշխատանք՝ փորձելու համար հասնիլ վերջնական համաձայնութեան», ըսած է ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը:

Փակման արարողութեան ելոյթէն ունեցած ոչ Միրզոյեանը, ոչ Պայրամովը:

«Մենք անհամբեր կը սպասենք այս գործընթացին շարունակութիւնը նաեւ յառաջիկայ շաբաթներուն՝ օգտուելու այն խթանին, որուն մենք օգնած ենք հասնիլ այս հանդիպումներուն շնորհիւ, տարբեր առանձին մասերու հետագայ համաձայնութեան միջոցով յառաջիկայ շաբաթներուն եւ ամիսներուն՝ կրկին ընդհանուր եւ վերջնական համաձայնագրի հասնելու նպատակով», ամփոփած է Պլինքըն:

Բանակցութիւններու Դադրեցումը

Շարունակուած էջ 1-էն

նի միջանցքի բացումը: Հայ-ատրպէյճանական բանակցութիւններու առկախումը միջազգային այս երեք կարելոր կեդրոններուն կողմէ պիտի ընկալուին որպէս իրենց ջանքերը ձախողելու ուղղուած

քայլ ու ազատ պիտի արձանագրուի Ալիեւներու ձեռքերը:

Այս բանակցութիւնները կարելոր են նաեւ ժամանակ շահելու առումով: Գաղտնիք չէ որ, ներկայիս Հայաստան պատրաստ չէ լայնածաւալ պատերազմի: Սակայն ընթացքի մէջ են բանակը արդիա-

Արեւմտեան Երկիրներու Պատժամիջոցային Հարցերով Յատուկ Ներկայացուցիչները Ժամանած են Հայաստան



Վարչապետ Փաշինեան կ'ընդունի ԱՄՆ Պետական Քարտուղարութեան պատժամիջոցներու համակարգման գրասենեակի ղեկավար Ճեյմս Օ-պրայընին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ԱՄՆ Պետական Քարտուղարութեան պատժամիջոցներու համակարգման գրասենեակի ղեկավար Ճեյմս Օ-պրայընի հետ քննարկած է տարածաշրջանին եւ միջազգային ասպարէզին մէջ տեղի ունեցող գործընթացները, ինչպէս նաեւ երկուստէք հետաքրքրութիւն ներկայացնող տարբեր հարցեր:

Պատժամիջոցները շրջանցելու հարցով Ռուսիոյ չօգնելու՝ Արեւմուտքի նախազգուշացումներէն եւ Հայաստանի մէջ արձանագրուած երկու ընկերութիւններու նկատմամբ պատժամիջոցներ կիրառելէ յետոյ Երեւան կը գտնուին արեւմտեան երկիրներու պատժամիջոցային հարցերու յատուկ ներկայացուցիչները: Անոնք բարձրաստիճան պաշտօնեաներու՝ այդ շարքին անձամբ վարչապետին հետ կը քննարկեն պատժամիջոցներուն

հետեւելու հարցերը:

Արեւմտեան պաշտօնեաները վերջին ամիսներուն կը պնդեն՝ որոշ ապրանքատեսակներ զարտուղի ճանապարհներով Ռուսիա կը հասնին, ուր անոնք կ'օգտագործեն ռազմական արտադրութեան համար, եւ կու տան նաեւ Հայաստանի անունը՝ որպէս տարանցիկ երկիր:

Ռուս-ուքրանական պատերազմի մեկնարկէն յետոյ՝ 2022-ին, ԵՄ անդամ պետութիւններէն Հայաստան արտահանման ծաւալները շուրջ 1,9 միլիարդ եւրո կազմած են, այնինչ նախապատերազմական 2021-ին այս ցուցանիշը 760 միլիոն էր՝ 2,5 անգամ պակաս: Աճած է յատկապէս էլեկտրոնային սարքերու ներմուծումը Հայաստան: Անցեալ տարի շեշտակի աճած է նաեւ Հայաստանէն Ռուսիա արտահանումը 2021-ի համեմատ գրեթէ երեք անգամ՝ գերազանցելով 4 միլիարդ տոլարը:

Ամերիկայի Անկախութեան Տօնին Առթիւ

Շարունակուած էջ 1-էն

մեր կառավարութիւններին միջեւ առկայ է փոխվստահութեան վրայ հիմնուած համագործակցութիւն, ինչը հնարաւորութիւն է տալիս արդիւնաւէտ կերպով հասցնելու առկայ մարտահրաւէրները եւ առաւել ամրապնդելու մեր պետութիւնները ու ժողովուրդները միջեւ կապը:

Մենք բարձր ենք գնահատում Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութեան, ինքնիշխանութեան եւ ժողովրդավարութեան աջակցութեան հարցում Միացեալ Նահանգների դիրքորոշումը, որը գործնականում դրսեւորուեց 2021-2022 թուականների ընթացքում: Մենք բարձր ենք գնահատում նաեւ ԱՄՆ-ի ջանքերը Հարաւային կովկասում եր-

կարատեւ եւ կայուն խաղաղութիւն հաստատելու, Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւնների կարգաւորման ու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրաւունքների եւ անվտանգութեան հասցնելու ուղղութեամբ: Հայաստանի Հանրապետութիւնը շարունակում է հաւատարիմ մնալ խաղաղութեան օրակարգին՝ յանուն Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութեան անձեռնմխելիութեան, յանուն անկախութեան, ինքնիշխանութեան եւ տարածաշրջանում երկարատեւ խաղաղ գարգացման:

Պարոն նախագահ, կրկին շնորհաւորում եմ Ձեզ Անկախութեան օրուայ կապակցութեամբ եւ մաղթում եմ Ձեզ եւ Ամերիկայի ժողովրդին բարօրութիւն, խաղաղութիւն եւ շարունակական յառաջընթաց»:

կան գինատեսակներով օժտելու աշխատանքները եւ ռազմավարական նոր հայեցակարգ որդեգրելու ծրագիրները:

Վերջին տասնամեակներուն, նախկին իշխանութիւններու անտարբերութեան պատճառաւ, խախտուեցան Հայաստանի Եւրոպայի միջեւ ռազմական հաւասարակշռութիւնը: Չայն վերականգնելը կը կարօտի ֆինանսական միջոցներու ու ժամանակի: Ներկայ կառավարութիւնը վճռած է կատարել նիւթական անհրաժեշտ յատկացումները, իսկ ժամանակի

հարցը պիտի լուծուի՝ բանակցութիւնները շարունակելու միջոցաւ:

Մեր նպատակը Արցախի Խորհրդարանի պատգամաւորներու յայտարարութիւնը քննադատելը չէ, պարզապէս հարցերուն պէտք է մօտենալ աւելի սառնասրտութեամբ եւ նայիլ իրենց աւելի լայն պարունակին մէջ, մինչեւ որ ստեղծուին աւելի նպաստաւոր պայմաններ՝ բանակցութիւններու սառեցումը որպէս միջոց օգտագործելու համար:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

Քսան Կախաղաններու 108-Ամեակի Ոգեկոչումը Պէյրուքի Մէջ



Հնչակեան Քսան Կախաղաններու 108-Ամեակի ոգեկոչումը Պէյրուքի Մէջ տեղի ունեցաւ Երեքշաբթի, 27 Յունիս 2023-ին, Անթիլիասի Մար Էլիաս եկեղեցույ դահլիճին մէջ:

Հանդիսութիւնը իրենց ներկայութեամբ պատուեցին ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Տոքթ. Համբիկ Սարաֆեան եւ վարչութեան անդամ ընկերներ Ալեքսան Քէօշկէրեան, Համբիկ Թաթուլեան եւ Վազգէն Համալեան, Լիբանանի շրջանի վարիչ մարմինի ատենապետ Ընկ. Վանիկ Տազեան եւ անդամները, Սուրիոյ հիւսիսային եւ հարաւային շրջաններու ՄԴՀԿ վարիչ մարմիններու ատենապետներ Ընկ. Աւետիս Խոշաֆեան եւ Ընկ. Խորհն Չարրքեան, Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս Լէոնարտ Ապաճեան, դեսպանութեան ռազմական կցորդ գնդապետ Ալեքսան Մուշեղեան, հոգեշնորհ տէր Յովակիմ Վրդ. Փանճարճեան, ՄԱՀԱԵՄ

Րախումը՝ նուագելով Լիբանանի, Հայաստանի եւ Հնչակեան կուսակցութեան քայլեզները, ապա բացման խօսքով հանդէս եկաւ ՄԴՀԿ Լիբանանի շրջանի վարիչ մարմինի անդամ Ընկ. Տիգրան Միհրանեան: Ան այս օրը համարեց նուիրական ուխտի նորոգման օր եւ գոհունակութեամբ դիտել տուաւ, որ այս առիթը կը նշուի միասնական ոգիով: Ընկ. Միհրանեան վերահաստատեց, որ հնչակեաններ երդուած է կառչած մնալ իրենց ուխտին եւ գաղափարին:

Իր ուղերձին մէջ, Ընկ. Վանիկ Տազեան նշեց, որ կախաղանի վրայ Քսաններու նահատակութիւնը պատուոյ շքանշան մըն է Հնչակեան կուսակցութեան յեղափոխական դրօշին վրայ, իսկ միւս կողմէն՝ մշտական ամօթանքի խարան մըն է իթթիհատական կառավարութեան եւ Թուրքիոյ ճակտին: Ան յիշեցուց, որ հնչակեան հերոսներուն անբակտէրի սկզբունքներէն են բռնակալին դէմ պայքարը, հայրենիքի



րածնունդը տեսնելու Քսաններուն երազը իրականացաւ ընդամէնը երեք տարի ետք, Ընկ. Սարաֆեան նմանութիւններ թուեց Հայաստանի առաջին հանրապետութեան եւ այսօրուան իրավիճակներուն միջեւ: «Հայաստանն ու Արցախը կ'ապրին ճակատագրական օրեր եւ պարտաւորութիւն կը զգանք ըլլալ ու խօսիլ անկեղծ», ըսաւ ատենապետ ընկերը: Յաւ յայտնելով, որ հայր դասեր չէ քաղած պատմութենէն, Ընկ. Սարաֆեան այսօրուան զարգացումները համեմատեց 1919-20 ժամանակահատուածին հետ: Ան

րաստուի, ամէն օր բազմացնելով սպառազինութիւնը»: Ան ցաւ յայտնեց, որ հայրենի բոլոր իշխանութիւնները վախցած էին իրականութիւնը արծարծելէ, խորհելով որ պիտի ստանան դաւաճանի պիտակաւորում: «Մեր դիւանագիտական ճարտողութեան պատճառով միջազգային ընտանիքը չգորակցեցաւ Արցախին, մինչ մենք վստահեցանք մեր դաշնակիցին եւ խորհեցանք, թէ պատերազմի պարագային ան պիտի պաշտպանէր մեզ», ըսաւ Ընկ. Համբիկ Սարաֆեան: Սարաֆեան: Ան կոչ ուղղեց գերծմնալը ներքին լարուածութենէն, որովհետեւ շրջանային իրավիճակը շատ լուրջ է գերպետութիւններու պայքարի լոյսին տակ: Ան անհրաժեշտ համարեց ձգտել խաղաղութեան, թէեւ հակառակորդը հայտնեց է ու անոր կարելի չէ վստահիլ: «Այսօր պէտք է ժամանակը օգտագործենք զինուելու եւ պատրաստուելու յաջորդ պատերազմին: «Ինչպէս 1920-ին մեզի օգնութեան չեկան մեծ պետութիւնները, նոյնն ալ այսօր է եւ մենք ենք մեր միակ ապաւենը: Մենք պիտի լուծենք մեր հարցերը, որուն համար պէտք է միասնականութիւն», ահազանգեց Ընկ. Սարաֆեան, որպէս պատշաճ օրինակ ներկայացնելով լիբանանահայութիւնը, որ 1975-90 պատերազմին ընթացքին ցուցաբերեց համերաշխութիւն:



նշեց, որ Արցախի առաջին պատերազմին յաղթանակը վերածուեցաւ դիւանագիտական պարտութեան, մինչ երկրորդ պատերազմը բացայայտեց անպարտելիութեան պատրանքը: «Դժբախտաբար, Արցախի հարցը չկրցանք ներկայացնել միջազգային հանրութեան եւ բացատրել, թէ ինչու Արցախի ժողո-

«Հայաստանը մեր վերջին հանգրուանն է, հետեւաբար հայրենիքը պէտք է ըլլայ բարգաւաճ, խաղաղ պայմաններու մէջ տեսնել իր գաւազներու ապագան», շեշտեց Ընկ. Սարաֆեան:



ներկայացուցիչ վեր. Հրայր Չոլաքեան, Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Պատրիարքութեան ներկայացուցիչ Տիար Ալեքսան Աշճեան, ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի, ՌԱԿ Լիբանանի Շրջանային վարչութեան ատենապետ Տոքթ. Աւետիս Տազեան, ՀԿԲՄ-ի ատենապետ եւ Պէյրուքի Քաղաքապետական խորհուրդի անդամ Արամ Մալեան, ՀՄՄ Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Միսաք Նաճարեան, Անթիլիաս-Նագագալ եւ Պուրճ Համուտ շրջաններու քաղաքապետութիւններու ներկայացուցիչները, ՄԴՀԿ մասնաճիւղերու վարչութիւններու, յարակից միութիւններու ղեկավարներն ու վարչական անդամները, ինչպէս նաեւ լիբանանահայ բազմութիւն մը:

փրկութիւնը, ընկերային արդարութիւնը, ժողովրդավարութիւնն ու ազատ ապրելու իրաւունքը:

Օրուան գլխաւոր պատգամը վերապահուած էր կուսակցութեան Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Տոքթ. Համբիկ Սարաֆեանին: Ան նշեց, որ Քսաններուն մէջ խտացած է օսմանեան կայսրութեան մէջ հայ ժողովուրդին ամբողջ պատմութիւնը, ցաւն ու տառապանքը, ապա արժանապատիւ կեանքի բարձրանալու էջը: Անոր խօսքով, Քսաններու արժանիքներէն են անսակարկ սէրը հայրենիքին հանդէպ, անձնագոհութեան անվերապահ պատրաստութեան անվերապահ կանխադրութիւնը եւ վտանգը կանխադրութեան ճակատագիրը կրնար շատ տարբեր ըլլալ, եթէ օրին իրականութիւն դառնար Հնչակեան ծրագիրը»: Յիշեցնելով, որ Հայաստանի վե-



վուրդը ունի ինքնորոշումի եւ անկախութեան իրաւունք», ըսաւ Ընկ. Սարաֆեան: Ան յիշեցուց, որ հայրենի իշխանութիւնները 25 տարի շարունակ խաբած են ժողովուրդը, պնդելով որ ունին շրջանի հզօրագոյն բանակը եւ թէ թշնամին պիտի չյարձակի: «Դժբախտաբար իրականութիւնը այդպէս չէր եւ մենք յաղթողի հոգեբանութենէն մեկնած մեր ուշադրութիւնը կեդրոնացուցինք Թուրքիոյ վրայ, թէեւ օր ըստ օր յայտնի էր, որ Ատրպէյճան մեծապէս կը պատ-

Ան իր ուղերձը եզրափակեց կոչ ուղղելով յանձնառու մնալու իրենց արիւնը հայրենիքին համար նուիրած նահատակներու կտակին: Գեղարուեստական պատշաճ յայտագրի ծիրին մէջ, ասմունքով հանդէս եկաւ Ընկ.հի Անի Եփրեմեան, իսկ լիբանանահայ երգիչ Ընկ. Յովիկ Թաֆրանեան ներկայացուց ազգային երգերու փունջ մը: Ներկաները ապա միասնաբար հանդիսութիւնը փակեցին «Ուխտի Հրաւէր» երգով: «ԱՐԱՐԱՏ» Լիբանան

Massis Weekly

Volume 43, No. 26

Saturday, JULY 8, 2023

«Ես այս գիրքը գրեցի որովհետեւ գրական այդ սեռին մէջ պակաս մը տեսայ» կ'ըսէ պարմանի հեղինակը: «Անհեթեթի նորավէպերը ընդհանրապէս կը զբաղին յունական, հռոմէական, եգիպտական, հնդկական դիցաբանութեան նիւթերով, բայց հայկական դիցաբանութենէ ներշնչուած որեւէ նորավէպ չի գտայ: Ուստի որոշեցի նորավէպի այս գրական սեռին մէջ հայ դիցաբանութիւնը մտցնել եւ հայ ժառանգութիւնը ներկայացնել: Այս աշխատանքի եւ պրպտումի ընթացքին ես ներշնչուեցայ զանազան աղբիւրներէ, վաւերագրական տուեալներէ, բարեկամներէ եւ ընտանեկան պարագաներէ հաւաքուած կեղեկութիւններէ, ինչպէս նաեւ յատուեցայ հօրս գիրքերէն»:

Նարայի անունը առաջին անգամը չէ որ կը զարգարէ գիրքի մը կողքը:

Ասկէ առաջ «Ուսողութիւն եւ Անջրպետ» (Math And Outer Space, 2018) եւ «մոլորակները, անոնց անունները եւ արեւային դրութիւնը» (Planets And Their Names And The Solar System, 2019) գիրքերով ան ներկայացած էր անգլիա-իտալիա հանրութեան իբրեւ մանուկ հեղինակ: Այդ սկզբնական ֆայլերուն մէջ Նարան բնական հետաքրքրութենէ մղուած մեզ շրջապատող տիեզերքը կը գննէր եւ իր յայտնութիւններուն բաժնեկից կ'ընէր մեզ:

«Դիցաբանական Առասպելներ» գիրքը Նարայի գրական նախափորձերու անդամստանէն ներս մեծ ուսում մը կ'արձանագրէ: Գիրքի ընթերցումէն ակնյայտ կը դառնայ անոր անգլերէն լեզուի, կառոյցի, գրական եւ խօսակցական ոճի կապակցութեամբ ունեցած հիմնական հմտութիւնը որ պատիւ կը բերէ իրեն: «Ես ազդուած եմ բազմաթիւ հեղինակներու գործերէն, բայց մասնաւորապէս Րիք Րիորտանի «Փէրսի Ժէքսըն եւ ողիմպիականները» (Rick Riordan, "Percy Jackson And The Olympians) շարքէն, կ'ըսէ Նարա:

Նորավէպին մէջ 13 տարեկան «Ապրիլ» կոչուած աղջնակ մը կը ձեռնարկէ դժուարին եւ վտանգաւոր առաքելութեան մը փրկելու համար իրեն ընկերակից եւ մտերիմ շնիկը՝ «Թէտին»: Նորավէպին մէջ «Թէտին» հայ դիցաբանութեան մէջ յիշուող «յարալէզ»ն է, տեսակ մը չաստուած որ մահուան դէմ ծանր պայքար կը մղէ եւ համաստեղութեան մէջ յաւիտեանս կորսուելու վտանգին առջեւ կը գտնուի: Ուրեմն պատմութեան հանգույցը եւ շարժակ հանդիսացող գաղափարը պարզապէս կը դառնայ այն հարցի շուրջը թէ արդեօք Ապրիլ պիտի կարենա՞յ իրեն ընկերակից եղող շնիկը եւ անոր բախտակից չաստուածները փրկել ստոյգ մահէ եւ աւերուածութենէն: Պատմութեան այս խորքը առիթ կ'ընծայէ Նարային ստեղծելու թատերական բարդ կացութիւններ ուր իր կերպարները կը զարգանան եւ ինքնութիւն կը ստանան:

Անհեթեթի նորավէպը իբրեւ գրական սեռ ունի իր օրէնքները, օրինաչափերը եւ եզրերը: Իբրեւ այնպիսին ան կը գործէ կախարդական աշխարհի մը սահմաններէն ներս, յենուելով աւանդական առասպելներու, դիցաբանութիւններու եւ տարաշխարհիկ արարածներու

Գրախօսութիւն Չայրեդարձող Բանաստեղծուհին



ՊՈԿՏ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ

Պիտի ըսեն՝ անհաւատալի է, մա՞րդ ալ այս օրերուն Հայաստան կը վերադառնայ. ամէնքը հոնկէ կը փախչին...: Այո, իսկապէս անհաւատալի է, եթէ չճանչնաք մեր նորաչափ բանաստեղծուհի ՆԱՐԻՆԷ ԽԱՐԲԵՐԻՅԱՆԸ, որ վերջերս Լոս Անճելէսի մէջ լոյս ընծայեց իր երախայրիքը՝ «Տողերիս երգը» բանաստեղծութեան գիրքը:

Դար մը առաջ Աւետիք Իսահակեան երգած էր. «Արագի ափին բոսթանս լինէր...», այսինքն, Արաքսի ափին պարտէզս մը ունենայի, իսկ Նարինէն կը գրէ.

Իմ Չայաստան աշխարհում ամէն ինչ ուրիշ է այնպէս, Շնչելը դիրիք է այնպէս, գարունը՝ կարմրաշող, ժպտերես:

Մտերմիկ մի գոռոց կայ պահուած ծառք փողոցի սնդիկում, Ու մանկութիւնը իմ անցած թաքուն ինձ ձեռքով է անում:

Նարինէն չի մերժեր այս «Թաքուն ձեռքը» եւ շուտով կը միանայ իրեն ծնած քաղաքին:

Տեսնող, զգացող, ապրող սրտի ու հոգիի համար աշխարհը թերեւս չքնաղ բուրաստան մըն է, ուր կան նաեւ վիշտ ու ցաւ, արցունք ու ժպիտ, սէրը ու հեռացում: Հայ մարդու համար, այս պարագային հայ կնոջ համար, կան տեսակ տեսակ փորձութիւններ ու մարտահրաւէրներ: Ան ոչ միայն քաղաքացի է, այլեւ մայր ու ընտանիքի հոգը իր վրա բարձած հոգածու արարած: Ան ունի նաեւ բաբախուն սիրտ՝ պատրաստ սիրելու եւ սիրուելու:

Մնած է Երեւան՝ Մեղրեցի վալդեայի 'Գիւմրեցի Հայկանուշի համեստ ու երջանիկ ընտանիքին մէջ: Հայրը նոյնպէս լաւ կ'երգէր եւ բանաստեղծութիւններ կը գրէր ու կը կարդար ընտանիքի անդամներուն:

Կը թուայ թէ տնտեսագիտական կրթութիւն ստացած ?եւ այդ բնագաւառին մէջ երկարատեւ աշխատած Նարինէ Մարգարեան-Խարբերեանը պէտք է ըլլար չոր, թիւերու եւ հաշիւներու մէջ կորսուած «ժամանակակից» հայուհի: Բայց եկուր տես, որ Նարինէի մէջ կայ նաեւ զգայուն, գործօն, ծառ ու ծաղիկով հիացած, հայրենիքի կարօտով այրուող փխրուն հոգի մը, որ մեծցեր է աւանդական կենցաղով, ապրած է տատիկի հետ, վայելէր է երբեմնի խաղաղ Երեւանի աշունն ու ձիւնը, գացեր է տատիկի հետ ու մոմ վառեր մերձակայ խաչքարի մօտ, ապա եասաման է հաւաքեր ու խնամեր՝ իւրաքանչյուր ծաղիկի մէջ տեսնելով

աստուածային հրաշք ու սէր:

Բանաստեղծուհի Նարինէն նույնպէս «համեստ էր է» արտագաղթողի դառն արցունքը, 2000 թ-ին տեղափոխուել է Լոս Անճելէս, բայց երբեք իր սիրտէն դուրս չէ մղած «մի օր հայրենի գիրկ վերադառնալու» երազանքը: 2014-էն ստիպուած ցոյցեր է կազմակերպել՝ գործօն կերպով մասնակցելով «Հայկական վերածնունդ», «Սասնայ Մուր» եւ «Ազգային ժողովրդավարական Բեւեռ» (ԱԺԲ) հետ իր մարտական ընկերներով, աշխատելով կրցածին չափ օգնել Հայաստանին՝ պայծառ ապագայ ունենալու յոյսով: Նարինէն միշտ հաւատացեր է, որ հայ ըլլալը մեծ պատիւ է իր բոլոր սրբազան պարտաւորութիւններով ու միշտ բարձր պահած է այդ ոգին:

Եւ հաւաստիկ 2023 թ. Յուլիսին պիտի վերադառնայ Հայրենիք՝ մշտական բնակութեան՝ հայրենադարձութիւնը ի թիւնելով եւ փոքրիկ ներգաղթի անձնական օրինակ մը ցոյց տալով:

Ամբողջ շարք մը նուիրուած է հայրենի քաղաքին, «նեղիկ թաղերին», ընկերուհիներուն, հարեւանին, խաչքարերուն ու անմոռանալի կակաչներուն:

Նարինէ Մարգարեան-Խարբերեանի սիրտին մէջ միշտ իր ներկայութիւնը կը զգացնէ սիրող սիրտ մը: Ամբողջ էութեամբ ան ապրած է սէրը իր բոլոր վերիվայրումներով, արտասուքով ու խնդրքով: Մէր, յուշ, կարօտ. հաւաստիկ յաճախ կրկնուող բառեր, որոնցմէ անհնար է խուսափիլ՝ անկեղծ սիրող սրտի համար:

Ու վերստին մենք թերթեմք անցած օրերը հրաշք:

Արի այսօր վերապրենք նրանց հմայքն անցման...

Սիրոյ ընկալումը Նարինէի մօտ կը գրաստեղծուի նաեւ աւելի լայն առումով՝ սէր ոչ միայն հայրենիքի, բնութեան, աշնան ու գարնան, այլեւ զաւակների հանդէպ:

Երկու փոքրիկ սրտիկ ինձ մայր եմ կոչում,

Երկու փոքրիկ սրտիկ տրոփում եմ իմ մէջ:

Նրանց իւրաքանչիւր թռթիւ, իւրաքանչիւր շարժում

Իմ միջով է անցնում հոսանքի պէս:

Քնարական բանաստեղծութեան անդամստանէն ներս թարմ լար մը կը նուագէ Նարինէն: Պէտք է կարողալ եւ ըմբոշիւնել:

Յ.Գ. Ստանալու համար դիմել kharbertyan@aol.com եւ նուիրատուութիւնը կատարել ցանկացած հայրենասիրական նպատակի:

Արամ Խաչատուրեանի Ծննդեան 120-Ամեակը Երեսուն Տարի Զլուծուող Համազգային Հարց (Արամ Խաչատուրեանի Հայաստանի Հիմնը)

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Արամ Խաչատուրեանի ծննդեան 120-ամեակին նուիրուած իմ նախորդ չորս յօդուածներում ես բնաւ չ'անդրադարձայ նրա՝ Հայ ժողովրդի վեհուածներն ու ազգային արժանապատուութիւնը արտացոլող խորհրդային Հայաստանի հիմնին, թողնելով այն որպէս աւարտ՝ կոմպոզիտորին նուիրուած իմ յօդուածաշարի:

Ես դեռ 1992-ին եմ ծաւալուն յօդուածով հանդէս եկել մամուլում Խաչատուրեանի հիմնը վերականգնելու մասին, ու նոյն տարին մասնակից դարձել Հայաստանի հեռուստատեսութեան շնորհալի հաղորդավար Արթուր Բախտամեանի հարցազրոյցին: Բայց առ այսօր, յոյժ անհրաժեշտ այդ խնդիրը չի լուծուել:

... «Օրհներգի փոփոխութիւնը վտանգաւոր, պառակտիչ օրակարգ է, ոտնձգութիւն՝ հայ ժողովրդի հաւաքական իդէալին, անկախութեանն ու ազատութեանը»:

Հինգ տարի առաջ, նման տողերով էր մամուլում հիւսել իր յօդուածը ոմն Լիլիթ Գալստեանը՝ կապուած Հայաստանի «Մեր հայրենիք» «հիմնի» հետ:

- Վահ սո՞ւ, էս ի՞նչ կոսէ, կ'ասեր Զամբախովը... էս ինչէ՞ր էք ասում տիկին Գալստեան: Ո՞վ է մերժում մեր անցեալը, ի՞նչպէս կարող ենք մենք մոռանալ մեր տառապալից անցեալը, ո՞վ չգիտի, որ Առաջին Հանրապետութեան կերտողը Դաշնակցութիւնն է, որը, դժբախտաբար, այդ օրերին բնորոշ ժամանակի սղութեան պատճառով, առանց խորամուկ լինելու իրերի մէջ, ինչպէս ասում են՝ փախ-թափալ որդեգրեց հայ երաժշտութեան հետ բնաւ աղերս չունեցող իտալական ժողովրդական երգի մեղեդին:

Մի քաղաքականացնէք երեւոյթները տիկին, մի բորբոքէք կրքերը՝ տպաւորութիւն ստեղծելով, թէ հայ ժողովրդի մի մասը փորձում է տրորել դաշնակցութեան որդեգրած սրբութիւնները: Նման բան չկայ տիկին Գալստեան: Նոյն ձեւով կարող են մտածել հայաստանահայերն ու սփիւռքում ծուարած ստուարածաւալ հայաստանցիները: Չէ՞ որ նրանք էլ չիստեն եւ աւելի տարիներ շարունակ, առաւօտ զարթնել եւ երեկոյեան անկողին են մտել Արամ Խաչատուրեանի փառահեղ երաժշտութեան տակ: Դժուար է թերեւս նրանց էլ հասկանալը:

Այս հարցի մէջ զգացմունքայնութիւնը տեղ չունի: Իրերին պիտի մօտենալ փաստացի տուեալներով, մանաւանդ, եթէ հարցը համազգային տարողութիւն ունի:

Մարդկայնօրէն ես հասկանում եմ, որ «Մայր Հայրենիք»ի հնչիւնների տակ սերունդներ են աճել Սփիւռքում եւ այսօր էլ զիշեր ու գոր մատաղ սերունդի շուրթերին է «Մայր Հայրենիք»ը եւ նրանց համար դժուար է այլ մեղեդու հնչիւնների տակ պանծացնել Հայրենիքը: Մեծանուն Արամ Խաչատուրեանի անունը շահարկելու կարիք չկայ յարգելի Լիլիթ, նա այնքան խոշոր է, որ նրա անունը մշտապէս ակնածանքով պիտի արտաբերել: Ախր, ի՞նչպէս թէ «Օրհներգը երաժշտական կամ գեղագիտական քննարկման առարկայ չէ», երբ «Մեր Հայրենիք»ի երաժշտութիւնը տառացիօրէն կապ չունի

նի հայ երաժշտութեան հետ:

Ի՞նչ անենք, բա չքննարկենք, չէ՞ որ դա պարզունակ, ոչ մի յուզում չ'առաջացնող ութ տակտանոց իտալական ժողովրդական երգ է, ազգային զգացումներին անյարիր մի հիւսուացք, որ կապ չունի «Հիմն» հասկացողութեան հետ: «Մեր Հայրենիք»ը գուրկ է վեհուածներին, չունի բարձրակէտ, երաժշտական լեզուով ասած՝ մաժոր-մինոր-մաժոր կառուց, տոնայնափոխութիւն, վերամբարձ կրկներգ: Արամ Խաչատուրեանի երաժշտութիւնը գուտ հայկական է եւ ազգակցական կապի մէջ է Մակար Եկմալեանի Պատարագի հետ: Կոմպոզիտորը բացայայտօրէն ազդուել է Պատարագի ամենալուսաւոր հատուածներին մէկի՝ «Քրիստոս ի մէջ մեզ յայտնեցաւ»ի երաժշտութիւնին:

Մտաբերէք խնդրեմ Խաչատուրեանի հիմնի երաժշտութիւնը եւ դուք անմիջապէս կ'զգաք, թէ ինչպէս է մեղեդին ստեպ առ ստեպ վեր բարձրանում՝ հասնելով յաղթական մաժորային բարձրակէտի, փառաւորելով մարդու հոգին ու նրա ներաշխարհը: Դա մի խմբերգ է, որը կոմպոզիտորի երկու յոբելեանների առիթով, 1993 եւ 1999 թ.թ. փոխելով Սարմէնի բանաստեղծութեան մի քանի բառեր, հնչեցրել է մի ՍԻՖԱՆ երգչախումբով եւ սիմֆոնիկ նուագախումբով՝ ծովածաւալ խանդավառութիւն առաջացնելով հայրենակարոտ հայորդիների հոգիներում:

Այո՞, օրհներգը պետական խորհրդանիշ է, նրան չի կարելի դիպչել, բայց այն պիտի յօրինուած լինի ազգային երաժշտութեան հնչերանգների վրայ, եւ ոչ թէ օտար, ոչ ինչ չասող երաժշտութեան:

Ութ կոմպոզիտոր նոր հիմն գրեցին, բայց ոչ մէկը մրցոյթում չկարողացաւ «յաղթել» Խաչատուրեանի երաժշտութեանը:

Օրհներգի փոփոխման օրակարգը «պառակտիչ» օրակարգ չէ եւ ոչ էլ «պոպուլիստական» շարժում տիկին Գալստեան:

Փաստերին պէտք է նայել բաց աչքերով: Զգացմունքայնութիւնը այս հարցում դեր չի խաղում, հասկացէ՞ք վերջապէս:

Իմ երկար տարիների պայքարը Խաչատուրեանի հիմնը վերականգնելու հարցում արդիւնք չտուեց, որովհետեւ մեր կոմպոզիտորները անփափկանկատօրէն միացան Խաչատուրեանի հիմնը փոխելու ցանկացող խմբին եւ որոշեցին նոր հիմն գրել ու մրցոյթի կարգով ներկայացնել յանձնաժողովին: Թող ներուի ինձ, նրանք անհամեստաբար «ոտք մեկնեցին» Խաչատուրեանի հետ եւ պարտուեցին՝ աւելորդ բամբասանքի նիւթ ստեղծելով շրջապատի, մանաւանդ երաժիշտների շրջանում:

Մրցոյթում յաղթող ճանաչուեց Խաչատուրեանի հիմնը՝ բանաստեղծական նոր տեքստ գրելու պայմանով: Ահա տասը տարի է անցել այդ օրերից, սակայն սայլը տեղից չի շարժուել: Այդ մրցոյթին Խաչատուրեանի երաժշտութիւնը ես էի ներկայացրել:

Մշակոյթի նորանշանակ նախարար Տիկին Յասմին Պողոսեանի միանգամայն ոգեւորիչ յանձնարարական անուրի տուրք տալով: Մենք համոզուած էինք, որ յաղթելու էր Խաչատուրեանի հիմնը: Մարդկա-

Հայկական ՍՍՀ օրհներգ
Haykakan SSH orhnerg
(State Anthem of the Armenian SSR)

Solemn, moderately slow

Armenak Sarkisyan 1944-1991 Aram Khachaturian

1. So ve ta kan a zat as xarh Ha jas tan, Ba zum da ter da zan cam pha du an char,
2. Le ninn an mah mez hurn an she par ge vech, Mer dem so gach jer dan ka ber aj ga bach,
3. Mets Ru sian mez jeq bai rut hjan oefkemek nech, Menkh ker tech inkh am ra kuif nor pe tut hjun,

Kha□ vor dixh kho ma kha fe chin khez ha mar, Vor darf nas du majr Haj re nikh ha jut hjan.
Hok tem be re kor ca nu mich mez phr kech Jev tvech mez nor paj caif kja nkh pha ra panc.
Le nin jan mer ku sak chut hjunn i ma stun, Haq tho ren mez dep ko mu nizm e ta num.

Pha'kh khez mišt pha'kh So ve ta kan Ha ja stan, As xa ta ser, dar ta ra gorc - ši na rar,
Zo qo vrd och surb da šin khov an sa san, Du caq kum jes jev ker tum lujs a pa gad.

յին բնականոն տրամաբանութիւնը յուշում էր, որ ամէն մի խելամիտ մարդ, տուեալ դէպքում կոմպոզիտոր, իրեն թոյլ չէր տայ «մրցել» Խաչատուրեանի համաշխարհային ճանաչման արժանացած երաժշտութեան հետ:

Ըստ իս, նոյնիսկ անհամեստ էր «չափուել» նրա հետ...

Մինչեւ մրցոյթի օրը միայն երկու օր կար: Մշակոյթի նախարարը, անսալով իմ խնդրանքին, ի պատիւ իրեն, կարողացաւ մի քանի ժամուայ ընթացքում Ռադիոյի ձայնադարանից ինձ հասցնել տալ Խաչատուրեանի հիմնի նուագախումբային ձայնագրութիւնը: Նոյն օրը իմ տրամադրութեան տակ դրեց Երեւանի Կենտրոն համայնքի երգչախումբը՝ վաղամեծիկ խմբավար Մարիկա Երիզարեանը: Կանացի երգչախումբը իմ բնակարանում սովորեց հիմնը՝ իմ կողմից փոփոխուած բառերով: Յաջող օրը Արա Գէորգեանի ձայնագրման ստուդիայում ձայնագրեցինք Խաչատուրեանի հիմնը՝ արդէն պատրաստի նուագախումբային ձայնագրութեան վրայ: Եւ միայն մրցոյթից հազիւ 10-15 րոպէս առաջ նախարարի անձնական վարորդը իմ տանից տարաւ հիմնի ձայնագրութիւնը:

Այժմ դարձեալ անդրադառնանք «Մեր Հայրենիք» հիմնին:

Մրցոյթից յետոյ իմ լաւագոյն բարեկամներից մէկը Երեւանից հեռաձայնեց եւ յայտնեց, որ «Մեր Հայրենիք»ի երաժշտութիւնը վերցուած է ռուս կոմպոզիտոր Գլազունովի «Ռայմոնդա» բալետից:

Անմիջապէս անցայ համակարգչի առջեւ եւ Գլազունովի բալետի երաժշտութիւնը «տակնուվրայ» անելուց յետոյ, գտայ մեր հիմնի երաժշտութիւնը եւ՝ ապշեցի: Ճիշդ եւ ճիշդ նոյն մեղեդին, նոտա առ նոտա, նոյնիսկ նոյն տոնայնութեան մէջ:

Արդէն յստակ դարձաւ, որ Բարսեղ Կանաչեանը չի յօրինել հիմնի երաժշտութիւնը: Նա պարզապէս նոտագրել է երգը եւ յետոյ վերածել քառաձայնի: Դա նոտա առ նոտա, հնչիւն առ հնչիւն կրկնութիւնն է «Իտալացի աղջկայ երգը» մեղեդու, որը ռուս կոմպոզիտոր Ալէքսանդր Գլազունովը օգտագործել է իր «Ռայմոնդա» բալետում, որն առաջին անգամ կատարուել է 1898 թուին, երբ Կանաչեանը ընդամենը 13 տարեկան էր, եւ չէր կարող յօրինել «Մեր Հայրենիք»ը: Կը նշանակի Կանաչեանը, ինչպէս եւ Գլազունովը, օգտուել են նոյն աղբիւրից: Արդէն քանիբոլորդ անգամ կրկնում եմ՝ մի

շահարկէք Կանաչեանի անունը, նա դրա կարիքը չունի: Նա սփիւռքահայ երգչախումբային արուեստի ամենակարկառուն ներկայացուցիչն է:

Սոյն յօդուածը գրելուց առաջ, մէկ անգամ եւս ինձ ստուգելու համար փորձեցի անցնել «Ռայմոնդա»-ին..., եւ, եւ ինչ հիասթափութիւն՝ You Tube-ից հանուած էր բալետի երաժշտութիւնը: Միայն 23 րոպէսանոց մէկ սիւլիտ կար բալետից, որի մէջ, բնական է՝ «Մեր Հայրենիք»ը չկար:

Աւելին. «Հայաստանի հիմնը Գլազունովի «Ռայմոնդա» բալետում» վերնագրի տակ չորս նիւթեր արգելափակուած էին՝ «Այս կոնտենտը ներկայումս հասանելի չէ» ամոթալի «բացատրութեամբ»: Խօսք չունեմ ասելու, բաւական հետեւողական եւ գգուշաւոր են աշխատում Հայաստանի իշխանութիւնները...:

Ասեմ, որ Գլազունովի «Ռայմոնդա» բալետը 1972 թուականին բեմադրուել է Երեւանի օպերային թատրոնում, եւ օրերս, առաջին անգամ, Յունիսի 24-ին բեմադրել են Երեւանի պարարուեստի պետական քոլեջի ուսանողները, վստահ եմ՝ առանց «Մեր Հայրենիք»ի...

Այժմ նայէք խնդրեմ, թէ ինչ տեսք է ստացել Սարմէնի հոյակապ բանաստեղծութիւնը՝ իմ կողմից փոփոխուած բառերով: Փոխուած բառերը գրուած են գլխատառով.


ԱԶԱՏ, ԱՆԿԱՆ, ՆԱԽՆԵԱՑ ԵՐԿԻՐ Հայաստան
Բազում դարեր, դաժան ճամբայ դու անցար,
Քաջ մախնիք մեր մաքառեցին քեզ համար,
Որ դարձնաւ դու, մայր հայրենիք հայրութեան:
ԿՐԿՆԵՐԳ.
Փառք քեզ, միշտ փառք, ԱԶԱՏ, ԱՆԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ,
Հանճարեղ դու, ճարտարագործ, շինարար,
ՀԱՅ ՄԵԾ ԱԶԳԻ ՍՈՒՐԲ ՀԱՒԱՏՈՎ ԶՕՐԱՅԱԾ,
Դու ծաղկուց եւ կերտում լոյս ապագայ:

ՆԱԽՆԻՆԵՐԻ ԼՈՅՍ ԵՐԱԶՈՎ ԿՈՒՌ ԴԱՐՁԱԾ,
Մենք կերտեցինք ՀԱՅԻ ՍՐՏՈՎ պետութիւն,
Ոչ մի ոսոխ չի կարող ծնկի բերել,
Անասան ժողովրդին մեր հնագոյն:
ԿՐԿՆԵՐԳ. Փառք քեզ, միշտ փառք...

Լոյս Տեսած Է Լիբանանահայ Գրող Սարգիս Նաճարեանի՝ Քարտինալ Աղաճանեանին Նուիրուած «Երանացման Ծանապարհին» Գիրքը

ԱՐՄԵՆՈՒՅԻ ՄԵՈՅԵԱՆ

Պէջրուծի մէջ լոյս տեսած է լիբանանահայ ճանչուած գրող, լրագրող Սարգիս Նաճարեանի՝ Քարտինալ Աղաճանեանին նուիրուած «Երանացման Ծանապարհին» գիրքը: Գիրքը կը ներկայացնէ հետաքրքիր դրուագներ կիրիկիայի կաթողիկէ հայ եկեղեցւոյ հայրապետ, Քարտինալ Գրիգոր-Պետրոս Աղաճանեանի կեանքէն: Անոնք, ինչպէս «Արմենպիրես»-ին տեղեկացուցած է Սարգիս Նաճարեանը, վկայութիւններ են Քարտինալի անցած ճանապարհին, եկեղեցական, ազգանաւէր գործունէութեան ու այն մեծ ժառանգութեան, որ թողած է մարտինալը:



«Գրքոյկը լոյս տեսած է Ամենապատիւ «Գերերջանիկ Կաթողիկոս պատրիարք Ռաֆայէլ Պետրոս ԻԱ Մինասեանի քաջալերանքով «Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան աջակցութեամբ: Գիրքը թող համեստ վկայութիւն ըլլայ Աստուծոյ Ծառայ Քարտինալ Աղաճանեանի սրբադասման դատին», - նշեց Սարգիս Նաճարեանը՝ տեղեկացնելով, որ Վատիկանի մէջ ընթացքի մէջ են Պետրոս Աղաճանեանին երանելիներու կարգին դասելու ուսումնասիրութիւնները:

Պապին ընդունելով քարտինալի գլխարկը, Աղաճանեանը յայտարարած է. «Կ'ընդունիմ աստիճանը խոնարհութեամբ, հպարտութեամբ: Խոնարհութեամբ, քանզի կը գիտակցիմ իմ անկատարութիւնը, իսկ հպարտութեամբ, քանզի ի դէմս ինձ կը պատուեն իմ սիրելի հայ ժողովուրդին, անոր սուրբերու նահատակներու արիւնը»:

Աղաճանեանը ղեկավարած է Կիրիկիայի Հայ կաթողիկէ պատրիարքութիւնը՝ Կիրիկիոյ Կաթողիկէ հայ եկեղեցւոյ հայրապետ եղած է, աւելի ուշ Հռոմի Պապ Պիոս XII-ը (1946թ.) անոր Քարտինալի աստիճան շնորհած է:

1962 թուականին Աղաճանեանը առողջական խնդիրներու պատճառով թողած է պատրիարքարանի ղեկավարութիւնը: Մահացած է Հռոմի մէջ, 1971 թուականի Մայիսի 10-ին:

Գրիգոր-Պետրոս Աղաճանեանը (ծննդեան անունը Ղազարոս) ծնած է Ախալցխայի մէջ 1895թ.-ին: Ուսում ստացած է Հռոմի մէջ: 1917 թուականին ձեռնադրուած է քահանայ, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի աւարտէն յետոյ ուղարկուած է Թիֆլիս, ուր նշանակուած է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայ կաթողիկէ եկեղեցւոյ հովիւ:

Բացի հայ կաթողիկէ համայնքի բարօրութեան համար աշխատելէ, Աղաճանեանը յարգանք վայելած է նաեւ որպէս առհասարակ կաթողիկ գործիչ: Վատիկանի Երկրորդ տիեզերական ժողովին՝ 1962-65 թուականներուն, ան եղած է Հրահանգներու Յանձնաժողովի անդամ, ինչպէս նաեւ ժողովուրդներու աւետարանչական միաբանութեան պրեֆէկտ:

1921 թուականին անոր ետ կը կանչեն Հռոմ, ուր կը ծառայէ հայկական հոգեւոր ուսումնարանին մէջ: 1934-ին Աղաճանեանին կ'ուղարկեն Լիբանան, իսկ 1937-ին՝ 42 տարեկան հասակին, ան կ'ընտրուի Կիրիկիայի հայ կաթողիկէներու Պատրիարք՝ Գրիգոր Պետրոս XV անունով:

Վատիկանը կ'ուզէ քարտինալ Պետրոս Աղաճանեանին երանելիներու կարգին դասել: Վատիկանի հոգեւորականները Աղաճանեանի կենսագրութեան քննարկումը սկսած են 2022 թուականի Հոկտեմբեր 28-ին:

Այս տարիներուն Աղաճանեանը հնարաւորինս օգնած է հազարաւոր հայ փախստականներու: Բացի այդ, անոր ուժերով Պէյրութի մէջ կանգնեցուցած է հայ ժողովրդի նահատակներուն նուիրուած առաջին յուշարձանը:

Գրող, լրագրող Սարգիս Նաճարեանը երկար տասնամեակներ «Արարատ» օրաթերթի եւ հայ կաթողիկէ պատրիարքարանի «Մասիս» պարբերաթերթի խմբագիրն է: Ղեկավարած է Հայ Կրթական Բարեսիրական միութիւնը, գործօն մասնակցութիւն ունեցած է ու կը շարունակէ ունենալ հայ կաթողիկէ պատրիարքութեան գանազան մարմիններուն մէջ: Անբասիր գործունէութեան համար Սարգիս Նաճարեանը արժանացած է բազմաթիւ պարգևներու, Հռոմի Պապին ու Հայ կաթողիկէ Պատրիարքին:

Հայաստանի Աշակերտներու Փայլուն Յաջողութիւնը Ինտոնեզիոյ Մէջ



Յուսադրիչ լուրեր կու գան Հայաստանէն: Նորահաս սերունդէն ունինք խոստմնալից դեռահասներ, որոնք երկրի պատիւը բարձր կը պահեն գիտութեան մարզէն ներս եւ փայլուն ապագայ կը խոստանան, իրենց ուսումնատենչութեամբ եւ արձանագրած յաջողութիւններով:

Լանի Քվանք վարժարանի սան է, արժանացաւ ոսկեայ մետալի (ողիմպիականի ամենամեծ մրցանակի «Կրանթ ըուըրտ»):

Քանի մը օրէ ի վեր, համացանցի հայկական դաշտին վրայ, կը տողանցէր ուրախ լուր մը: Հայաստանցի խումբ մը աշակերտներ 25-28 Յունիսին, ինտոնեզիոյ մէջ մասնակցեցան կիրառական կենսաբանութեան միջազգային ողիմպիականներուն եւ աննախընթաց արդիւնք մը ապահովեցին, արժանանլով 4 ոսկեայ, 1 արծաթեայ եւ 2 պրոնզեայ մետալներու:

Յակոբ Պերիխանեան, որ Ա. Շահինեանի անուան բնագիտութեան եւ ուսողութեան յատուկ դպրոցի սան է, արժանացան ոսկեայ մետալի եւ յատուկ մրցանակի՝ կենսաբանական մտաւոր պատկերի համար:

Արդարեւ, եթէ ղպրոցականները՝ յաղթահարելով կիսաեզրափակիչ փուլը, անցան եզրափակիչ եւ հետեւեալ բարձր արդիւնքներով վերադարձան Հայաստան:

Խոսքով Յաքանեան, որ դարձեալ Քվանթ վարժարանի սան է ոսկեայ մետալ ստացաւ:

Անի Իսրայէլեան կը ներկայացնէր Արմաւիրի թիւ 1 վարժարանը: Ան նոյնպէս արժանաւ ոսկեայ մետալի:

Լեւա Մանուկեան, Միւիթար Հերացիի անուան աւագ դպրոցի աշակերտուհի է, արժանացաւ արծաթեայ մետալի:

Կամուռի Աբրահամեան, Քվանք վարժարանի աշակերտ եւ Մարիամ Դոխոյեան, Միւիթար Հերացիի անուան աւագ դպրոցի սանուհի, արժանացան պրոնզեայ մետալի:

Արամ Խաչատուրեանի Ծննդեան 120-Ամեակը

Շարունակուած էջ 13-էն

Ինչպէս նկատուած էք, փոփոխութիւնները շատ չեն եւ բնաւ չեն ազդում բանաստեղծութեան ոգու եւ տրամադրութեան վրայ: Նման մասնակի, այսօրուայ հայի մտածումներին յարիւր բառերի փոփոխումով (թէրեւ կարելի է աւելի լաւ ու համազոր բառեր գտնել) մենք կարող ենք հանգիստ խղճով փրկած լինել մոռացութեան մատնուած Սարմենի բանաստեղծութիւնը եւ թէ՛ Արամ Խաչատուրեանի փառայեղ երաժշտութիւնը:

ուած, կողք-կողքի, դարձել մի մարմին: Եւ չեմ գարմանում նաեւ, որ, ինչպէս Դանիէլ Երաժիշտն ասաց, Սարմենի հարազատները դէմ են բանաստեղծութեան մէջ որեւէ փոփոխութիւն կատարելուն:

Երկու-երեք ամիս առաջ շնորհառատ երաժիշտ, յօրինող, հոգեւոր երաժշտութեան քաջատեղեակ Դանիէլ Երաժիշտն ինձ յայտնեց, որ Արամ Խաչատուրեանի հիմնի համար յայտարարուած բանաստեղծական մրցոյթին ներկայացուած 130 բանաստեղծութիւններից ոչ մէկը չի շահել: Ես չեմ գարմանում, որովհետեւ կոմպոզիտորն ու բանաստեղծը հիմնը ստեղծել են համագործակց-

Որեմն, մեծապարզ Դանիէլ, սիրելի բարեկամ, քեզ մնում է Հայաստանի եւ Սփիւռքի երաժիշտների համատեղ գործակցութեամբ եւ Հայաստանի կոմպոզիտորների Միութեան աջակցութեամբ ուղիներ գտնել համոզելու Սարմենի ընտանեկան պարագաներին, որպէսզի նրանք վերանայեն իրենց վերաբերմունքը համազգային այս յոյժ կարեւոր հարցի վերաբերեալ:

Այսու՝ ոչ մի արտառոց բան չկայ, եթէ երաժշտութեան հեղինակի անուան կողքին գրուի՝ Խօսք՝ Սարմենի (խմբագրուած):

Արամ Խաչատուրեանի ծննդեան 120-ամեակին նուիրուած այս յրեկեանական տարուայ լաւագոյն նուէրը նրա յիշատակին՝ նրա հիմնի վերականգնումն է:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՇՈՊԻ ՇԱՄԱՐ)

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՇԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

www.massispost.com
daily news updates

Երիտասարդ Չայնեթեր

Շարունակում է 12-էն

Եւ կերպարներու վրայ: Յաճախ փոխ կ'առնէ իրական աշխարհէն դէպքեր եւ գաղափարներ, մանաւանդ պատմական հին շրջանէն եւ միջնադարէն, ստեղծելու իւրօրինակ աշխարհ մը: Անհետեւ ինտրովիւզը ընթերցողը կը ճոխադրէ առասպելական աշխարհ մը ուր վիշապներ ա՛հ ու սարսափ կը սփռեն իրենց շուրջը եւ ուր գերհզօր ոյժեր ուրիշներու վրայ գերակայութիւն ձեռք ձգելու կը ձգտին: Այս երեւակայածին աշխարհին մէջ բարին եւ չարը կը պայքարին իրարու դէմ, հերոս կերպարը եւ նոյնիսկ անարգը, կը ձգտին տիրանալու իշխանութեան, ուժի կամ գիտութեան ճամբով լաւ կամ վատ ազդեցութիւն բանեցնելու հասարակութեան վրայ: Թէեւ պատմութեան հանգուցը կարեւոր բաղադրարար է մըն է, բայց աւելի կարեւոր է կերպարներու կերտումը եւ անոնց մարդկայնացումը իրենց առաւելութիւններով, տկարութիւններով կամ ձախողութիւններով: Թէեւ կը գիտակցինք որ հերոսները մարդկային տիպարներ չեն, այսուհանդերձ անոնց վարուելակերպը հասարակ մարդկային խորք եւ բնոյթ կը ստանայ: Այս պատճառով կերպարներու դիմազրաւած մարտահրաւէրները կ'ապրինք, անոնց յաղթանակներով կը հրճուինք, կը տիրինք ի տես անոնց ձախողութիւններուն եւ միաժամանակ կը հիանանք անոնց ցուցաբերած քաջութեան վրայ:

Նարա էքստրականի գիրքը այդ տեսակէտէն հանդիպման վայր մըն է ուր հայ դիցաբանութեան եւ պանթէոնի պատկանող հերոսներ իրարու կը հանդիպին, օտար չաստուածներու եւ դէմքերու հետ կապեր կը հաստատեն, անոնց հետ խօսակցական խելացի բախումներ կ'ունենան, եւ յաճախ հայերէն բացատրութիւններու եւ ասոյթներու գործածութեամբ գոյն, խանդ եւ աւիր կը ներարկեն ընդհանուր մթնոլորտին: Նարան յաճախ կը

գուրճանայ իր պատմութեան անցքերը լեցնելով ընտանեկան պարագաներու եւ դէմքերու խօսակցութեամբ, եւ առտնին երեւոյթներու լիշատակութեամբ որոնք տեսական բնականութեան մթնոլորտ մը կ'ընծայեն պատմութեան ընթացքին: Հայ ընտանիքը կը խօսի, կը վիճի, տարբեր սերունդներու ներկայացուցիչներ կեանքի նկատմամբ իրենց ունեցած ըմբռնումները ի յայտ կը բերեն եւ իւրաքանչիւրը իր դատը կը ներկայացնէ եւ կը պաշտպանէ: Մտաւորական եւ գրգայնութեամբ թաթալուէն բախում մըն է ուր ո'չ յաղթող եւ ո'չ պարտեալ կայ, այլ շնչող կեանքի պատկեր մը: Հիմնականին Նարան այս պահերը կը գործածէ իբրեւ շողաղ անհետեւի պատմութեան կառուցն ու ընթացքը զօդելու եւ պահպանելու համար:

Նարայի նորավէպի 250 էջերու մէջ պատմողական առոյգ եւ գունագեղ լեզուն զմայլանք եւ հիացմունք կ'առաջացնէ ընթերցողին մօտ: Միաժամանակ իր կատարած դիտարկումները, արտայայտած մտածումները եւ խոհական արտայայտութիւնները անակնկալի կը բերեն ընթերցողը իրենց վաւերականութեան ուժգնութեամբ եւ այժմէականութեամբ:

Երկրորդական վարժարանի ուսանող պարմանուհիի ամէկուր ժպիտի ետին Նարա էքստրականի յայտ կու գայ իբրեւ զօրաւոր կամք, անհատականութիւն եւ ինքնավստահութիւն ունեցող անձ մը: «Ապագայ ծրագիրներուս մաս կը կազմէ» կ'ըսէ ան «այս գիրքի շարունակութիւնը ստեղծել: տեսնենք թէ այդ աշխատանքը ուր կը տանի գիտ: Ես շատ ուրիշ պատմելիքներ ունիմ եւ կը յուսամ որ այս աշխատանքը ինձի կը հասցնէ ինչ ուր կընամ իբրեւ գրող հանգստաւէտ կեանք մը ապրելի»:

Անկասկած Նարայի վերոյիշեալ բարեմասնութիւնները մեծ եւ հիմնական դեր կը կրեն իսպալ անոր ապագայի երազները, իրձերը եւ նպատակները իրագործելու իբրեւ գրող:

Եգալի Դրատարակութիւն Մը

Շարունակում է 11-էն

նէական բարոյական վեմ սկզբունքներ եւ եկեղեցագիտական հարուստ գիտելիքներ, համեմիչ աղ եւ լուսաւոր ճանապարհ հանդիսանալով հայ ընտանիքին, վարժարանին եւ աշակերտին: «Կրօնական Ձեռնարկ» դասագիրքերու հրատարակութիւնը կու գայ փաստելու թէ ուսանելիք երկրորդական նիւթ մը չէ կրօնը, այլ անկրօնաբարը կը կազմէ մարդու կրթութեան, անոր հոգեմտաւոր պատրաստութեան ու բարոյական դաստիարակութեան: Սոցիալական Ձեռնարկի հրատարակութիւնը ոչ միայն կը դիւրացնէ այլեւ մանաւանդ կը քաղցրացնէ ուսուցիչին աշխատանքը եւ միաժամանակ կը բեղմնաւորէ աշակերտին եռանդն ու ջանքը եւ աստուածգիտութեան մշտանորոգ հուրը վառ կը պահէ պատանի թէ երիտասարդ, ներկայ թէ ապագայ սերունդներուն մտքին ու սրտին մէջ: Կրօնական դասագիրքերուն հայթայթած նիւթերով եւ աստուածային գիտելիքներով զինուած հայ աշակերտը եւ ապագայ ընտանիքի հայրն ու մայրը անպարտելի կամքով պիտի պատերազմին կեանքի փորձութիւններուն ու մոլորութիւններուն դէմ:

Հիւսիսային Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի օրհնութեամբ լոյս տեսած «Կրօնական Ձեռնարկ» դասագիրքերու իր Ողջոյնի խօսքին մէջ կ'ըսէ, թէ սոցիալականութեան նպատակը «Հայ աշակերտի մտքի, սրտի եւ հոգու մէջ լայնօրէն տարածել աստուածգիտութեան ուղիքը, Քրիստոսի սէրը, Հայ Եկեղեցու նուիրումի եւ ծառայութեան ոգին բարոյական կեանքի ճաշակը»: Սրբազանը իր խօսքի աւարտին կը հրաւիրէ հայ վարժարաններու տնօրէնները, ուսուցիչները, ծնողները եւ աշակերտները առաւելագոյնս օգտագործելու Արեւմտեան Թեմի հովանաւորութիւնը վայելող սոցիալականութեան:

Երբ ներկայ մեր կեանքը լեցուն է մարտահրաւէրներով եւ մեր արժէքները վտանգող երեւոյթներով, միայն քրիստոնէական կրօնի ճշմարիտ ուսուցումը կը կրնայ աստուածգիտութեան, ընկերսիրութեան, ներողամտութեան եւ այլ արժէքներու հեզահամբոյր հոգին դրոշմել մեր նոր սերունդի գաւակներուն մէջ: Վստահ ենք, որ նոր, եզակի, արժէքաւոր դասագիրքերէն լաւագոյն արդիւնքը առատօրէն քաղելու ու վայելելու համար հարկ է մասնաւոր տեղ տալ անոնց հայ վարժարաններու ուսմանակրթական ծրագիրներուն մէջ: Սոցիալական դասագիրքերու հրատարակութիւնը առաձիգն բաւարար չէ՞ իր նպատակին ծառայող:

յեցնելու համար անհրաժեշտ է առաւելագոյն չափով տարածել եւ բոլորին սեփականութիւնը դարձնել: Արեւմտեան Թեմը «Կրօնական Ձեռնարկ»ը առանց պայմանի եւ սիրայօժար վերահրատարակութեան իրաւունք կը շնորհէ Հայաստանի թէ Սփիւռքի բոլոր հոգեւոր ու կրթական կառույցներուն ու հաստատութիւններուն, սոցիալականագիրքերու ճամբով Ս. Գրոց աղբիւրներուն ու մեր հաւատքի սկզբունքներուն հետ հաղորդուելու եւ մեր գաւակներուն կրօնական, հոգեւոր, բարոյական ծառայող յազմեցնելու:

«Կրօնական Ձեռնարկ»ին առաջին երկու դասագիրքերուն հեղինակը քրիստոնէական կրօնի հմուտ եւ փորձառու Հայկ Մադոյեանն է: Երրորդ դասագիրքին հեղինակը Արթուր Ջալէն Քհնյզ Արքեպիսկոպոստ Ստեփանն է: Առաջին դասագիրքը կը պարունակէ Աստուածաշունչ մատենանի՝ Հին եւ Նոր Կտակարաններու կարեւորագոյն հատուածները, սկսելով տիեզիքի եւ մարդու ստեղծագործութեան պատմութենէն հասնելով մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հրաշափառ յարութիւն ապա համբարձում եւ անոնց մէջ ինկած երկար ժամանակահատուածի կարեւորագոյն իրադարձութիւնները: Երկրորդ դասագիրքը իր մէջ կը պարփակէ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու կառուցումը քին, սուրբ խորհուրդներուն եւ կարեւոր տօներուն վերաբերեալ ուսուցողական դասեր: Իսկ երրորդ դասագիրքին մէջ կը ներկայացուին Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու երկհազարամեայ պատմութեան եւ եկեղեցական կարգին վերաբերող կարեւոր դասեր: Իրաքանչիւր դասագիրք կը բաղկանայ 25 դասերէ իսկ իրաքանչիւր դասի մէջ նախ կը ներկայացուի մատուցուելիք նիւթը, որուն կը յաջորդէ հարցարան մը ապա բառարան մը: Դասը կ'աւարտի գրաբար եւ աշխարհաբար աղօթքով մը: Անցնող շաբաթներուն, իւրաքանչիւր դասագիրքէն երկու հարիւր օրինակ որպէս նուէր փոխանցուցաւ Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց Թեմի առաջնորդարանին, յանձին Յովնան Եպիսկոպոս Յակոբեանին: Երեք դասագիրքերու արեւմտահայերէնը պատրաստ է եւ հրատարակութեան պիտի յանձնուի յառաջիկային:

Վստահ ենք, որ սոցիալականագիրքերու շօշափելի օգուտները պիտի քաղէ անկէ: Վերջապէս, դպրոցական դասագիրքը ըլլալով հանդերձ, երեք հատորանոց ընդարձակ ծանօթութիւններով հարուստ այս ձեռնարկը բոլորին համար ընթերցանութեան շահեկան գիրք մըն է:

Անհետեւի Նորավէպ (Fantasy Novel) Իբրեւ Գրական Սեռ

Առասպելները մարդու պատմութեան սկզբնաւորութենէն ի վեր մաս կազմած են ընդհանրական մշակութիւն, ինչպէս կրնանք հետեւեցնել զանազան ժողովուրդներու մօտ գարգացած շատուածներու, հրէշատիպ անասուններու եւ կախարդական արարածներու առկայութենէն՝ հինէն մեզի մնացած աւանդակներու, դիցաբանութիւններու եւ կրօնական բնոյթ ունեցող բնագիրներուն մէջ:

Անհետեւի նորավէպի գրականութեան նորագոյն շրջանը սկիզբ առաւ 19-րդ դարուն Եւրոպայի մէջ գարգացած ասպետական եզրերով յատկանշուող վիպասանութեան կամ վիպերգութեան իբր հետեւանք: Այդ գրականութեան մէջ երեւակայականն ու պատրանքայինը իբրեւ հաւատարժան տարր լայն ընկալում ունէր : Սկովտիացի հեղինակ ճորձ Մըքտանըլտ (George MacDonald) եւ Անգլիացի գրող Ուիլիամ Մորրիս (William Morris) առաջիններէն հանդիսացան որ մեզի ծանօթ աշխարհէն տարբեր մտացածին կամ երեւակայական աշխարհ մը ստեղծեցին իրենց գրականութեան մէջ: Այս երկու գրողներուն հետեւելով Ժ. Ր. Թոլքին (J. R. R. Tolkien) գրեց իր նշանաւոր անհետեւի նորավէպը (The Lord of the Rings) 1954-1955 թուականներուն:

Յետագայ տասնամեակներուն, եւ մեզի աւելի մօտ, անհետեւի գրականութեան հանրային ճանաչումը աւելի գարգացաւ եւ տարածուեցաւ երբ երեւան եկաւ Ժ.Ք. Րոլինկի (J. K. Rowling) Harry Potter վէպերու շրջան՝ 1997-2007 թուականներուն: Այդ գիրքերը հանդիսացան բոլոր ժամանակներու ամէնէն տարածուած եւ ժողովրդական գիրքերը: Անհետեւի գրականութեան լաւագոյն նմուշներէն կը նկատուին Lewis Carroll-ի Alice in Wonderland (1865) , C. S. Lewis-ի The Lion, the Witch and the Wardrobe (1950), եւ George R. R. Martin-ի A Game of Thrones (1996) հեղինակութիւնները:

Կարեւոր է նշել որ անհետեւի նորավէպը թէ՛ մանուկներու եւ թէ՛ չափահասներու հասցեագրուած գրականութիւն մըն է: Սակայն գայն պէտք չէ շփոթել հէքիաթներու կամ գիտական ստեղծաբանութեան (science fiction) հետ: Մինչ հէքիաթը պարզապէս կ'ենթադրէ որ մոգական կամ

կախարդական աշխարհ մը գոյութիւն ունի, անհետեւի մեզի կը ներկայանայ իբրեւ կախարդական դրոյթի արդիւնք եղող աշխարհ մը ուր կը տիրեն երեւակայական կամ մտացածին անձեր: Բաղդատմամբ այս երկուքին գիտական ստեղծաբանութիւնը կը զբաղի արուեստագիտական ապագայի մը հեռապատկերով ուր գիտական նուաճումները եւ զարգացումները կը տնօրինեն մարդու ապագան: Կ'ըսուի թէ գիտական ստեղծաբանութեան պարագային անհաւանական նկատուող գրողի գրչիին տակ կարելի կը դառնայ, իսկ անհետեւի գրականութեան պարագային անկարելին հաւանականի զգեստ կը հագնի:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթերին

Կնիազ Իբոյեանը Յաղթեց Թուրք Մրցակիցին Եւ Նուաճեց Ոսկէ Մետալ



Կնիազ Իբոյեանը ոսկէ մետալ նուաճեց Սպանիոյ Սանտիակո տէ Կոմփոստելա քաղաքին մէջ կատարուող ազատ ոճի ըմբշամարտի Եւրոպայի երիտասարդական առաջնութեան:

92 քկ կարգի եզրափակիչին Մ23 Եւրոպայի փոխախօսեանը գոտեմարտեց թուրք Մուհամէտ Կիմրիի հետ եւ յամառ պայքարի ընթացքին չաղթանակ հասաւ 3:2 արդիւնքով:

Հայաստանի խումբը ազատ ոճի Եւրոպայի երիտասարդական առաջնութեան պայքարը աւարտեց 1 ոսկէ, 3 արծաթէ եւ 2 պրոնզէ մետալներով:

Պասքետպոլի Հայաստանի Հաւաքականը Կը Մասնակցի ԱԱ-ի Ընտրական Փուլին

Հայաստանի պասքետպոլի ֆետերացիան 2027-ի. աշխարհի առաջնութեան ընտրական առաջին փուլին մասնակցելու յայտ ներկայացուցած է: Վիճակահանութիւնը տեղի կ'ունենայ Օգոստոսի 8-ին Գերմանիոյ Միւնխի քաղաքին մէջ: Ընտրական փուլը կը սկսի 2024-ին: Փետրուարին:



Երկրորդ փուլ անցնելու պարագային հաւաքականները պայքարը կը շարունակեն 2025-ին Յունիսին:

Հայաստանի հաւաքականը անցած տարի դարձած էր Եւրոպայի փոքր երկիրներու առաջնութեան չաղթող:

ՖԻՖԱ. Հայաստանի Հաւաքականը 90-րդն Է

Ֆուտպոլի միջազգային ֆետերացիան հրապարակած է ազգային հաւաքականներու դասակարգման աղիւսակը: Հայաստանի հաւաքականը բարձրացած է 7 տեղ եւ 90-րդն է:

Առաջատարը աշխարհի ախոյեան Արժանթինն է:

1. Արժանթին՝ 1873.73
2. Ֆրանսա՝ 1843.54
3. Պրագիլ՝ 1828.27
4. Անգլիա՝ 1797.39
5. Պելճիքա՝ 1788.55
6. Խորուաթիա՝ 1742.55
7. Հոլանտա՝ 1731.23
8. Իտալիա՝ 1726.58
9. Փորթուկալ՝ 1718.25
10. Սպանիա՝ 1703.45
-
90. Հայաստան՝ 1224.08



ՖԻԴԵ. Լեւոն Արոնեանը 15-րդն Է, Գաբրիէլ Սարգսեանը՝ 44-րդը

Շախմատի միջազգային կազմը (ՖԻԴԵ) հրապարակած է շախմատիստներու ամենամսեայ դասակարգման աղիւսակը: Հայաստանի հաւաքականի նախկին առաջատար Լեւոն Արոնեանը (ԱՄՆ) 15-րդ տեղն է: Առաջատարը նորուելիացի Մակնոս Քարլսենն է:



100 ուժեղագոյններու ցանկին մէջ Հայաստանն ունի 4 ներկայացուցիչ: Գաբրիէլ Սարգսեանը (2692) 44-րդն է, Հայկ Մ. Մարտիրոսեանը (2685) 53-րդն է, Շանթ Սարգսեանը (2654) 89-րդն է, Հրանտ Մելքումեանը (2650) 97-րդն է:

Աւարտած Մրցաշրջանի Աշխարհի Լաւագոյն Ֆուտպոլիստներու Տասնեակը



Սպանական հեղինակաւոր Marca պարբերականը կազմած է աւարտած մրցաշրջանի լաւագոյն ֆուտպոլիստներու տասնեակը: Քուէարկութեան մասնակցած են լրագրողներ, նախկին ֆուտթոլիստներ եւ մարզիչներ, կայքի ընթերցողներ:

Լաւագոյնն ճանչուած է Անգլիոյ ախոյեան, գաւաթակիր, Ախոյեաններու Լիգայի չաղթող «Մանչեսթըր Սիթիի» նորուելիացի յարձակող Էրլինգ Հոլանտը:

Անցած տարի դափնեկիրը Մատրիտի «Ռեալի» նախկին յարձակող, ֆրանսացի Քարիմ Բենզեման էր:

- 1-Էրլինգ Հոլանտ («Մանչեսթըր Սիթի»)
- 2-Լիոնել Մեսի (ՊՍՏ/«Ինթեր Մայամի»)
- 3-Վինիսիուս Ժունիոր («Ռեալ»)
- 4-Կիլիան Մփապէ (ՊՍՏ)
- 5-Քեւին Տէ Պրոյնէ («Մանչեսթըր Սիթի»)
- 6-Ռոտրի («Մանչեսթըր Սիթի»)
- 7-Անթուան Գրիզման («Աթլէթիքօ»)
- 8-Վիկտոր Օսիմեն («Նափոլի»)
- 9-Իլկայ Կիլոսթոկա («Մանչեսթըր Սիթի»/«Պարսելոնա»)
- 10-Խվիչա Կվարացիելիա («Նափոլի»)

Իտալիական Երկու Ակումբներ Չեւտաքրքրուած Են Լաիր Տիկնիզեանով

Իտալական «Էմփոլին» ու «Պոլոնիան» հետաքրքրուած են Հայաստանի հաւաքականի եւ Մոսկուայի «Լոկոմոտիւի» 24-ամեայ պաշտպան Նաիր Տիկնիզեանով:



Իտալական ակումբներու սկաուտները հետեւած են Նաիր Տիկնիզեանի խաղին Ուելսի (4:2) եւ Լատվիայի (2:1) դէմ Եւրօ-2024-ի ընտրական մրցաշարի հանդիպումներուն, կը հաղորդէ Sport-express.ru-ն: Ուելսի դէմ խաղին Տիկնիզեանը կատարած էր կոլային փոխանցում, Լատվիայի դէմ խաղին նշանակած էր մէկ կոլ:

Նեյմարը Կը Փափաքի Վերադառնալ «Պարսելոնա»

Պրագիլի հաւաքականի յարձակող Նեյմարը կը փափաքի Ֆրանսայի ախոյեան ՊՍՏ-էն վերադառնալ Սպանիոյ ախոյեան «Պարսելոնա»: Ակումբները արդէն բանակցած են եւ կ'իրականացնեն փոխանցումը, եթէ 31-ամեայ ֆուտպոլիստը համաձայնի աշխատավարձի կրճատման:

Գաթալոնական ակումբը պատրաստ է վերադարձնել Նեյմարին նաեւ պայմանով, որ ՊՍՏ-ն շարունակէ վճարել անոր աշխատավարձի մեծ մասը: Նեյմարը փարիզեան ակումբին մէջ կը ստանայ տարեկան մօտ 30 միլիոն եւրօ:

Անցած մրցաշրջանին ան ՊՍՏ-ի հետ մասնակցած է 29 հանդիպման, նշանակած է 18 կոլ, կատարած է 17 կոլային փոխանցում:

Սփապէն «Ռեալէն» Պահանջած Է 240 Միլիոն Եւրօ

Ֆրանսայի ախոյեան ՊՍՏ-ի եւ Ֆրանսայի հաւաքականի 24-ամեայ յարձակող Կիլիան Մփապէի ներկայացուցիչներու եւ Մատրիտի «Ռեալի» բանակցութիւնները մտած են փակուղի:

Պատճառը Մփապէի ֆինանսական պահանջներն են: Ֆուտպոլիստը կ'ուզէ պայմանագրի ընթացքին Արքայական ակումբէն աշխատավարձի եւ պոնտոններու տեսքով ստանալ ընդհանուր առմամբ 240 միլիոն եւրօ: Եթէ այս ամրան իրականացուէր փոխանցումը, «Ռեալը» նաեւ 180-200 միլիոն եւրօ պէտք է վճարեր ՊՍՏ-ին:

«Ռեալի» ղեկավարութիւնը Մփապէի հետ կը բանակցի, եթէ ան չ'երկարաձգէ պայմանագիրը փարիզեան ակումբի հետ եւ յաջորդ ամրանը անվճար միանայ մատրիտեան խումբին: